

4158

3K720
7-68



100 505

22 JUL 2013

335.5
Դ-68

01 JUL 2005

Ա-ԱՐԱՐԱՏԻ ԱՎԵՐԱԿԱՆ ԳԵՐԵՐԱՏ ԽՈՐԴԱՅՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՎ

200

Պրոլետարներ բոլոր երկրների, միացէք.

- 1 DEC 2008

3K7

Դ-68

գ. Ա. ՊԼԵԽԱՆՈՎ

3
Դ-

ՄԱՐՔՍԻԶՄԻ

ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

14153

Թարգմ.



ՀՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԱԴՐԻԱՆ
ՄԱՅԻՆ—1920

ՄԱՐՔՍԻԶՄԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մարքսիզմը — դա մի ամբողջական աշխարհայեցողութիւն է: Կարճ արտայալտած — դա ժամանակակից մատերիալիզմն է, որը այժմն ներկայացնում է զարգացման բարձրագոյն աստիճանը այն աշխարհակայքոց ը, որի հիմքը զրել են Յունաստանում Դեմոկրիտը և մասում Դեմոկրիտից առաջ լոնիական մատադրները. այսպէս կոչւած գիլօգոիզմը ոչ այլ ինչ է, եթէ ոչ նախվ մատերիալիզմ: Ժամանակակից ժամանակակից մշակման ամենազիստաւոր ժառալութիւնը պատկանում է անկասկած Կարլ Մարքսին և նրա բարեկամ Ֆրիդրիխ Էնգելսին: Այդ աշխարհայեցողութեան պատճական և անտեսական կողմերը, այսինքն՝ ալպէս կոչւած պատճական մատերիալիզմը և նրա հետ անքակտելի կերպով կապւած տնտեսական դարգացման (մանաւանդ կապիտալիստական) խնդիրների, մեթոդների և կատեղորիաների մասին եղանակակետների համախմբումը իր հիմքերում բացառապէս Մարքսի և Էնգելսի գործն է: Այն, ինչ այդ մասում արել են նրանց նախօրդները, պէտք է դիտել միմիայն որպէս առատ, թանկարժէք, բայց տակաւին սիստեմի չվերածւած. չուսարանւած մի ընդհանուր մտքով — զրա համար էլ իրենց իսկական մտքով չզնահատւած և չօգտագործած հում նիւթերի հաւաքման նախապատրաստական աշխատանք: Այն, ինչ արել են նոյն մասերում Մարքսի և Էնգելսի հետ և ողներ եւրոպացում և Ամերիկայում, ներկայացնում է իրենից առանձին, նիշտ է, երբեմ չափազանց կարեւոր հարցերի լազար մշակումն միայն Ահա թէ ինչու ոչ միայն «լոյն հասա-

բակութեան» համար, որը մինչև այժմ տակաւին չէ հասունացած փիլիսոփայական ուսմունքներ բժրոնելու, այլ և իրենց Մարդու և էնդէլսի հարատարիմ հետեղդներ համարող մարդկանց համար (և դա ոչ միայն Խուսաստանում, այլ և ամբողջ քաղաքակիրթ աշխարհում) ամարքսիզ» աերժինը աճախ նշանակում է ժամանակակից մատերիալիստական աշխարակալեցողութեան քիչ վերև լիշտածու երկու կողմերը միայն Ուզ գէպրում մարքսիզմու), ալդ երկու կողմերը դիտում են «փիլիսոփայական մատերիալիզմից» բոլորումին անկախութեան որովհետև ալդ երկու կողմերը, որոնք կամայականորեն մեկուսացւում են նրանց տեսական հիմքը կազմող ու համազօր հայեցքների համախմբումից, չեն կարող կախուած մնալ օդում, դրա համար էլ մեկուսացման ալդ օպերացիան կատարող մարդիկ բնականորեն կարիք են գումար վերստին «հիմնաւորել մարքսիզմը», կցելով այն (կրկին բոլորովին համայական կերպով և լահախ բուրժւական իդէոլոգին երի մէջ տիրապետող փիլիսոփայական կառուցւածքների ազգեցութեան ուսկի) ալս կամ այն փիլիսոփային — Կանտին, Մախին, Աւենարիուսին, Օստավալդին, իսկ վերջին ժամանակներս Խոսիֆ Դիցգէնին, Վերջինիս փիլիսոփայական հայեցքները, նիշտ է, առաջ են եկել բոլորումին անկախ բուրժւական ազգեցութիւններից և դդայի չափով հարադար են Մարքս-էնդէլսի փիլիսոփայական հասկացողութիւններին: Բայց վերջիններիս ուսմունքը անհամեմատ աւ ելի ամբողջական է և բովանդակութեամբ հարուստ, ալդ իսկ պատճառով չի կարող լրացւել (բայց կարող է մասսամբ բնութանը լրացւել) Դիցգէնի ուսմունքի օգնութեամբ: Մինչև այժմ փորձ չէ արւած «լրացնել Մարքսը» Ակադեմիացիոնի: Բայց «ընչեան անհնարին չի լինի, եթէ հակառակ ծօդեանիստների գէմ ուղղաւած պապի շրջաբերականի, կաթոլիկական աշխարհը իր միջից առաջ մէկ մտածողի, որը ընդունակ կինի տեսական ալդ սիրագործութիւնը կատարելու:

Մարքսիզմը այս կամ այն փիլիսոփակով՝ «լրացնելու» անհրաժեշտութիւնը ապացուցում է սովորաբար այն պատճեռաբանութեամբ, որպէս թէ Մարքսը և Էնդելով ոչ մի տեղ չեն գրել իրենց փիլիսոփայական տեսակետի մասին։ Բայց այդպիսի պատճառաբանութիւնը համոզեցուցիչ չէ։ Չենք խօսում արդէն այն մասին, որ եթէ նայնիսկ այդ տեսակետը մնացել է իսկապէս առանց զրի առնւելու, բայց և այնպէս դա ոչ մի տրամարանական հիմք չէ տալիս փոխարինելու այն—մեծ մասամբ բոլորովին այլ տեսակետի վրա։ Կանգնած առաջին հանդիպած մտածողի մտքերով. պէտք է իրշել, որ մենք ունենք բաւականաչափ դրական աւեալներ։ Մարքս-Էնդելով փիլիսոփայական հայեացըների մասին նիշանակացուաթիւն կազմելու համար¹⁾։

Վերջնականապէս կազմակերպւած արդ հայեցք-
ները բաւականին լրիւ կերպով գրի են առնւած,
թէև բանակալի ձեռփ, Էնդէլօֆ „Herrn Evgen Dührings um-
välzung der Wissenschaft“ աշխատութեան առաջին մասում
(կան ոռուսերէն մի բանի թարգմանութիւններ): Նոյն հեղինակի
„Ludwig Feuerbach und der Ausgang der klassischen Philosophie“
աշխատութեան մէջ (ռուսերէնի ևս վերածել ես, որին կցել եմ
առաջարան ու լրացնչիչ նկատողութիւններ). հրատարակու-
թիւն Լվովիչի) մարքսիզմի վիճակային հիմք կազմող հայ-
եցքները գրի են առնւած դրական ու պարզ ձեռփ: Նոյն հայ-
եցքների կարճ, բայց վառ բնօրոշումք ու նրանց յարաբ-
րութիւնը դիպի ագնոստիցիզմը էնդէլօֆ տւել է «Գր-
տական սօցիալիզմի զարգացումը» աշխատութեան՝ անդիմ-
կան հրատարակութեանը կցւած լառաջարանի մէջ (վերած-
ւած է գերմաներէնի և տպւած „Neue Zeit“ №№ 1—2, 1892—
—1893 „Ueber den historischen materialismus“ վերնագրով): Իսչ
վերաբերում է Մարքսին, նրա ուսմունքի վիճակային

¹⁾ Μαρκς-Ευρετήριον φύλτυπηματοθέματον τ. Αιγαίουδ. Δ. Φ. Φίρθεροφ μετα-
τυπωθετούσαντος—“Marx als Philosoph” Bern und Leipzig 1904. επιγγ. ηθικών
περιβαλλοντικών προβλ. παν. αισθήθ. θρησκ., παν. αγρ. αγροτικοποθέματος

Հողմերը հասկանալու համար խիստ կարևոր է — առաջին, մատերիալիստական դիալիկտիկայի բնորոշումը (նրա ապրելութիւնը չէգէլի իդէալիստական դիալիկտիկալից) «կապիտալի» և հատորի երկրորդ հրատարակութեան լառաջարանի մէջ, և երկրորդ, մի շարք առանձին նկատողութիւններ նոյն նիւթի մասին, որ արւած են նոյն հատորի մէջ՝ Որոշ տեսակետից շատ կարևոր են „Misere de la philosophie“ (կայ ոռուսերէն թարգմանութիւնը) աշխատութեան մի քանի երեսները: Վերջապէս Մարքս-Էնդէլսի փիլիսոփայական տեսակէտից դարդացման պրոցեսուր խիստ որոշ երեսն է դալիս նրանց առաջին աշխատութիւնների մէջ, որոնք նորից հրատարակել է Ֆ. Մերինզը Aus dem literarischen Nachlass von Karl Marx (Stuttgart, 1902) վերնագրով:

Իր „Diferenz der demokratischen und epikurischen Naturphilosophie“ գիտական աշխալի մէջ, ինչպէս և վերոլիշեալ զըրքի 1-ին հատորում Մերինզի արտատպած մի քանի յօդւածներում, երիտասարդ Մարքսը երեսն է դալիս տակաւին որպէս չէգէլեան դպրոցի գտարիւն իդէալիստ: Իսկ այն յօդւածներում, որոնք այժմ տեղ են գտնել նոյն հատորում և սկզբում լոյս էին տեսել „Deutsch-französischen Jahrbücher“-ի մէջ, նաև (ինչպէս և „Jahrbücher“-ում աշխատակցող Էնդէլսը) ամուր կանգնած է Ֆէլերբախի «հումանիզմի պատմակետի վրայ: 1845 թ. լոյս տեսած և Մերինզի հրատարակութեան 2-րդ հատորում արտապւած „Die heilige familie oder kritik der kritischen kritik“ գիրքը ցոյց է տալիս մեզ, որ երկու հեղինակներն էլ (այսինքն Մարքսն ու Էնդէլսը) մի քանի խոշոր քայլեր են արել Ֆէլերբախի փիլիսոփայութեան յետադալ ծշակման մէջ: Թէ ինչ ուղղութեամբ էր ձեռնարկւած ալդ մշակումը, նկատելի է 1845 թ. գարնանը Ֆէլերբախի մասին Մարքսի զրած տասնեմէկ թէղիսներից, որոնք Էնդէլսը լոյս է ընծայել ալ: Ֆէլերբախ» ըրոշիւրի յաւելածի մէջ: Մի խոսքով այսակ նիւթի պահառաթիւն չկայ, պէտք է միմիայն զիտենալ օգտւել զրանցից, պարինքն պէտք է պատրաստւած լինել ալդ նիւթերը հասկա-

նալու համար: Ժամանակակից ընթերցողները հէնց անպատճառ են ալդ նիւթերը հասկանալու, զբա համար էլ չեն կարողանում օգտւել նրանցից:

Ինչի՞ց է առաջնում դա: Կան շատ պատճառներ: Ամենագլխաւոր պատճառն այն է, որ ներկայումս շատ քիչ են տարածւած — առաջին, չէ գէլեան փիլիսոփայութիւնը, առանց որի գժւար է իւրացնել Մարքսի մեթոդը, երկրորդ, մատերիալիզմի պատմութիւնը, որի հետ մանօթ զինելլ թողլ չէ տալիս ժամանակակից ընթերցողներին պարզ գաղափար կազմել ֆէլերբախի ուսմունքի մասին, որը Մարքսի փիլիսոփայութեան անմիջական նախորդն էր և որը զգալի չափով մշակել է Մարքս-Էնդէլսի աշխարահայեցութեան փիլիսոփայական հիմունքը:

Ֆէլերբախի «հումանիզմը» ներկայումս պատկերացւում է, որպէս մի ինչ որ խիստ անորոշ և մութ բան Ֆ. Ա. Լանգէն, որը ընդհանրապէս շատ է նպաստել «բայն հասարակութեան» մէջ և գիտական աշխարհում տարածելու բոլորովին սիալ տեսակէտ մատերիալիզմի հութեան և նրա պատմութեան մասին, բոլորովին հրաժարում է ֆէլերբախի «հումանիզմը» որպէս մատերիալիստական ուսմունք ընդունելուց: Յօդ տեսակէտից Ֆ. Ա. Լանգէնին լետեսում են թէ Ռուսաստանում և թէ արտաստանանում ֆէլերբախի մասին բոլոր գրողները: Ինչպէս երեսում է, նրա ազդեցութիւնից չի խուսափել նաև պ. Ա. Բերլինը, որը պատկերացնում է ֆէլերբախի «հումանիզմը» որպէս մի ինչ որ «զուտա» մատերիալիզմ: Խոստովանում ենք, մեզ համար բոլորովին պարզ չէ, թէ ինչպէս է նայում ալդ հարցին Ֆր. Մերինզը, որը փիլիսոփայական հարցերի մէջ գերմանական սոցիալ գենորդատներից ամենալաւ, բայց ոչ միակ հմուտ անձնաւորութիւնն է: Բայց զբա փոխարէն մեզ համար բոլորովին պարզ է, որ Մարքսը և Էնդէլսը ֆէլերբախի մէջ տեսնում էին լատիապէս Մատերիալիստի: Ճիշտ է, Էնդէլսը մատնանշում է ֆէլերբախի անհետելողականութիւնը: Բայց զա բոլորովին չէ խանգարում նրան ընդունելու, որ նրա փիլիսոփայութեան

հիմնական սկզբունքները զուտ մատերիալիստական են: Եւ ուրիշ կերպ էլ չեր կարող վերաբերել դրան այն մարդը, որը շանացել է լաւ ուսումնասիրել այդ սկզբունքները:

II.

Սուելով այդ բոլորը, մենք շատ լաւ գիտենք, որ պետք է մեր ընթերցողներից շատ-շատերին զարմացնենք: Բայց մենք չենք վախենում զրանից, որովհետև իրաւացի է հին մասմաղը, որը ասել է, թէ զարժանքը փիլիսոփայութեան մալրն է: Եւ որպէս զի մեր ընթերցողները չֆան, այսպէս առած, զարմացման աստիճանի վրայ, մենք նրանց ամենից առաջ խորհուրդ ենք տալիս հարցնել ինքն իրենց, թէ իսկապէս ի՞նչ էր ուզում ասել Ֆէլերախը, երբ նա իր փիլիսոփայական curriculum viatae-ն մի քանի վառ խօսքերով սուերադելիս զրում էր. «Ասուած իմ առաջին միաքն էր, բանականութիւնը—երկրորդ, իսկ մարդը—երրորդ և վերշնու» Մենք պնդում ենք, որ այդ հարցը անդառնալիօրէն վեռում է նոյն Ֆէլերախի հետեւալ խստ նշանակալից խօսքերով. «Ասուերիալիզմի և սպիրիտուալիզմի վեճի մէջ խօսքը շարունակ մարդկալին զլսի մասին է. եթէ մենք իմանանք, թէ ինչ է ներկայացնում իրենից այն նիւթը, որից կազմւած է ուղեղը, այդ դէպքում մեզ համար պարզ կլինի. Թէ ինչ է «մի որեւէ տւեալ նիւթը», թէ ինչ է ընդհանրապէս նիւթը»¹⁾: Մի ուրիշ տեղ նա ասում է, որ նրա «անտրապոլագիան», —այսինքն «Հումանիզմը», —մատնանշում է միայն այն բանը, որ մարդ որպէս Ասուած ընդունում է իր սեփական էութիւնը, իր սեփական ոգին²⁾: Եւ այդ Ասնտրապոլագիական» տեսակէտը օտար չէ, ինչպէս նկատում է ինքը Ֆէլերախը, նաև Դեկարտին³⁾: Ի՞նչ է նշանակում այս բոլորը: Դա նշանակում է, որ Ֆէլերախը որպէս յանդման կէտ

իր փիլիսոփայական զատազութիւնների վերցնում է «մարդունու միմիայն նրա համար, որ նա յօդ ունէր ելնելով այդ կէտից, աւելի շուտ հասնել այն նպատակին, որի էութիւնն է հիշտ հասկացողութիւն կազմել այն մասին, թէ ինչ է նիւթը և ինչպէս է սրա յարաբերութիւնը գէպի «Հովին»: Կնշանակէ այսաեղ մենք գործ ունենք մեթոդ ական եղանակի հետ, որի նշանակութիւնը պայմանաւորւում էր տեղի և ժամանակի հանգամանքներով, —այսինքն՝ ժամանակակից զիտնականների և կրթւած գերմանացինների մտածելու եղանակով¹⁾), բայց ոչ երբէք աշխարհացողութեամբ:

Արդէն «մարդկալին զիտի» մասին մեր առաջ բերած Ֆէլերախի խօսքերից նկատելի է, որ այն ժամանակ, երբ նա դրում էր այդ խօսքերը, «ուզեղը կազմող նիւթի» մասին եղած հարցը նա վճռել էր «զուտ» մատերիալիստական մրարով: Եւ հարցի նրա այդ որոշումը ընդունել են նոյնպէս Մարքսն ու Էնդելը: Եւ այդ որոշումը ընկած է նրանց սեփական փիլիսոփայութեան հիմքում, որը խիստ որպէս նկատելի է արդէն մի քանի անգամ լիշտակած էնգէլսի ու. Ֆէլերախի և «Անտի-Դիւրինգ» աշխատութիւններից: Ահա թէ ինչու մենք պէտք է աւելի մտածից ժանօթանանք հարցի լիշտակած հետ, ուսումնասիրելով այն, մենք միաժամանակ ուսումնասիրած կլինենք Մարքսիզմի փիլիսոփայական կողմբ:

1842 թ. լոյս տեսած „Vorläufige Thesen zur Reform der philosophie“ իր յօդւածում, որը ինչպէս նկատելի է, շատ ուժեղ ազդեցութիւն է թողել Մարքսի վրայ, Ֆէլերախն ասում է, որ «մատածողութեան (մաշլենի) խկական յարարերութիւնը դէպի կացութիւն (բայտի) կայանում է հետեւալում. կացութիւնը —ուսւութեական է, մտածողութիւնը —պը բեգիկատ: Մատածողութիւնն է պայմանաւորւում կացու-

¹⁾ Փելերախը նարը շատ լաւ առաջ է, որ ամեն մի փիլիսոփայութեան ուկիցը որպես է փիլիսոփայական մորի նախընթաց որութեան (Werke II, 193):

²⁾ Ueber spiritualismus und materialismus; Werke; X; 129.

³⁾ Werke; IV; 249.

³⁾ Նոյն տեղը. Այսն իրեւա-

թեամբ, և ոչ թէ կացութիւնը — մտածողութեամբ։ Կացութիւնը պայմանաւորւում է ինքն իրենով... իր հիմքն ունի հէնց ինքն իր մէջ¹⁾։

Կացութեան և մտածողութեան յարաբերութեան վերաբերեալ այս տեսակէտը, որ Մարքս-Էնդելսը զբել են պատմութեան մատերիալիստական բացագրութեան մատերիալիստ, Հէգէլի իդէալիզմի ըննադատութեան ամենակարեար հետեւանքն է, որը իր գլխաւոր կէտերում արդէն վերջացրել էր Ֆէլքրախը և որի եղրակացութիւնները մի քանի խօսքով կարելի է արտայալածել ալսպէս։—

Ֆէլքրախը դատաւ, որ Հէգէլի փիլիսոփայութիւնը՝ վերացրեց կացութեան ու մտածողութեան մէջ եղած այն հակադրութիւնը, որը խիստ որոշակի արտայալածել է Կանաք: Բայց Ֆէլքրախի կարծիքով Հէգէլի փիլիսոփայութիւնը վերացնելով ալդ հակադրութիւնը, շարունակեց ի՞նը ըը մնալ նրա մէջ, այսինքն, — ալդ հակադրութեան էլէմէնտներից մէկի մտածողութեան մէջ Հէգէլի համար մտածողութիւնը հէնց ինը կացութիւնն է. «Միտքը — սուրեկտ է, կացութիւնը — պրեգեկատ»²⁾): Դուրս է դալիս, որ Հէգէլը (և ընդհանրապէս իդէալիզմը) վերացնում է կացութեան ու մտածողութեան հակադրութիւնը, վերացնելով ալդ հակադրութիւնը կազմող էլէմէնտներից մէկը, այսինքն կացութիւնը, նիւթը, բնութիւնը Բայց հակադրութիւնը կազմող էլէմէնտներից մէկի վերացնելը չի նշանակում բոլորովին լուծել ալդ հակադրութիւնը։ Հէգէլի ուսմունքը այն մասին, որ բնութիւնը «ենթադրւում է» իդէալով, նշանակում է միմիսին փիլիսոփայական լեզւի վերածել աստւածաբանական այն ուսմունքը, ըստ որի բնութիւնն ստեղծել է Աստւած³⁾): Եւ զա վերաբերում է ոչ միայն Հէգէլի բայցարձակ իդէալիզմին. Կանաք գերզդադական

(трансценденталъный) իդէալիզմը, ըստ որի արտաքին աշխարհը ստանում է իր օրէնքները բանականութիւնից, և ոչ թէ բանականութիւնը արտաքին աշխարհից, անքաշտելի կերպով կապւած է աստւածաբանական (теологический) պատկերացման հետ, ըստ որի աշխարհին՝ նրա օրէնքները թելադրել է աստւածապին բանականութիւնը¹⁾: Իդէալիզմը չէ հաստատում կացութեան և մտածողութեան միասնութիւնը և չի կարող հաստատել այն. իդէալիզմը, ընդհակառակը, քայլքայում է այդ միասնութիւնը։ Իդէալիստական փիլիսոփայութեան ելման կէտը, — «Ես», որպէս փիլիսոփայական հիմնական սկզբունք, — բայրովին սիօալ է։ Խսկական փիլիսոփայի համար որպէս ելման կէտ պէտք է ժառայէ ոչ թէ «Ես» և դուս։ Միմիայն ելման այդ կէտը հնարաւորութիւն է տալիս նիշտ հասկացողութիւն կազմելու կացութեան ու մտածողութեան, սուրեկտի և օրեկտի մէջ եղած յարաբերութեան մասին։ Ես կամ, ես ինքս ինձ համար եմ, և միաժամանակ — ուրիշի համար ես։ Ես սուրեկտ եմ և միենոյն ժամանակ — օբեկտ։ Բացի զրանից պէտք է նկատել, որ Ես — վերացական էութիւն չէ, որով գործ է տեսնում (оперирует) իդէալիստական փիլիսոփայութիւնը։ Ես — իրական էութիւն է, իմ մարմինը պատկանում է իմ էութեանը. աւելին. — իմ մարմինը, — որպէս ամբողջութիւն, — հէնց իմ Ես ն է, իմ խսկական էութիւնը։ Մտածում է ոչ թէ վերացական էութիւնը, այլ հէնց ալդ իրական էութիւնը, ալդ մարմինը։ Ալգախով, հակառակ այն բանի, ինչ պնդում են իդէալիստները, իրական — նիւթական էութիւնը երեան է գալիս որպէս սուրեկտ, իսկ մտածողութիւնը — պրեգեկտ։ Եւ զրանում է կալանօւմ միակ հնարաւոր լուծումը կացութեան և մտածողութեան մէջ եղած այն հակադրութեանը, որի վրայ այնպէս իզուր աշխատում են իդէալիստները։ Այսանց չի վերացւում ալդ հակադրութեան և ոչ մի էլէմէնտը։ Նրանք երկուսն ել պահպանում են, երեան հանելով

¹⁾ Werke. II. 295.

²⁾ Werke. II. 263.

³⁾ Werke. II. 261

⁴⁾ Ibid. 262.

իրենց խոկական միասնութիւնը: «Այն, ինչ ինձ համար, կամ սուբեկտիւ կերպով զուտ հոգեկան, աննիւթ, անզգայական դործողութիւն է (ակտ), այն ինքն ըստ ինքեան օրեկտիւ է, նիւթական, զգայնական գործողութիւն է»¹⁾:

Նկատեցք, որ ասելով այդ, Ֆելերբախը մօտենում է Սպինօզային, որի փիլիսոփայութեան մասին նա մեծ համակրութեամբ գրել էր դեռ այն ժամանակ, երբ տակաւին նոր էր երեան գալիս նրա գժառութիւնը իդէալիզմի հետ, այսինքն՝ երբ նա գրում էր նոր փիլիսոփայութեան պատմութիւնը: 1843 թիւն նա իր „Grundsätze“ աշխատութեան մէջ շատ նուրբ նկատել է, որ հաճասատւածութիւնը (Պանտեզմ) աստւածաբանական մատերիալիզմ է, աստւածաբանութեան բացասումն է, մնալով աստւածաբանական տեսակէտի վրայ Մատերիալիզմը թէօլոգիայի հետ շփոթելու մէջ է կաշանում Սպինօզայի անհետեղականութիւնը, որը սակայն չէ խանգարում նրան գտնելու որպեսնայն դէպս իր ժամանակին համապատասխան նիշտ արտադրութեան նորագոյն դարեցընանի մատերիալիստական հասկացողութիւնների համար»: Դրա համար էլ Ֆելերբախը անւանում է Սպինօզային անորագոյն ազատ մտածողների և մատերիալիստների Մավսէս»²⁾: 1847 թ. Ֆելերբախը հարցնում է: «Ուշադիր նախելու գէպքում ի՞նչ կլինի այն, ինչ Սպինօզան տրամաբանորէն կամ վեշտականորէն (մետաфизիկա) կոչում է սուրբութեանցիա, իսկ աստւածաբանորէն — Աստւածու: Այդ հարցին նա վճռականորէն պատասխանում է: Այս կլինի միմիայն բնութիւնը»³⁾ Սպինօզի

¹⁾ Werke, 350.

²⁾ Werke, II, 291.

³⁾ Եյտեղ մենք յատկան ընթերցողի ուշաբութեան մաք յաւախում է մագլիս այն ժողովը վրայ, որ արտաքին ընութեան օրէնքները ու այն օրէնքները, ովոնք կանոնադրութ են մարդու մարմական ու նողելան վասնը, են «Zwei klassen von Gesetzen, die wir höchstens in der vorstellung, nicht aber in der Wirklichkeit von einander trennen können,, (Herrn Evgen Dürings umwälzung der Wissenschaft fünfte auflange, s, s, 112-113) ու այս ուսումնուն լին է կացութեան ու մատադրութեան, օրէկտիւ ու սուրեկտիւ միասնութեան մասին: Ժամանակի ու տարածութեան մասին նայիր յիշած շաբախութեան առաջն մասի Յիսուսը պատվոր Այդ գլուխ նկատելի է, որ ժամանակն ու տարածութիւնը Խավելսի անձան (Խավան ու Ֆելերբախի համար ոչ մրայն մտավայեցաղութեան, այլ ու կնշանի ծեմը ոն նայիր յատկանը 41—42 երեսները):

դիմումոր պակասութիւնը նա տեսնում է նրանում, որ արնութեան հակասաւածաբանական էութիւնը նրա մօտ ընդունում է վերացական, մետաֆիզիկէ էութեան ընաւորութիւնն: Սպինօզան վերացրեց Աստծու և ընութեան դուակնզմը, որովհետեւ յարաբարեց, որ բնութեան գործերը Աստրծու գործերն են: Եւ որովհետեւ բնութեան գործերը նրա աչքում Աստծու գործեր են, զրա համար էլ Աստւած մընում է բնութեան հիմքը կազմող, բայց նրանից բոլորին անշատ ինչ որ էութիւն: Աստւած պատկերացւում է որպէս սուրեկտ, իսկ բնութիւնը — պրեգիկատ: Աստւածաբանական աւանդութիւններից վերջնականապէս ազատւած փիլիսոփայութիւնը պէտք է վերայնի իր էութեամբ նիշա Սպինօզայի փիլիսոփայութեան այդ կարևոր պակասութիւնը:

«Կորչի՛ այդ հակասութիւնը», բացականչում է Ֆելերբախը: Ոչ թէ Deus sive Natura, այլ այt Deus, aut Natura-ն է ճշմարտութեան նշանարանը»¹⁾:

Ալդպէս, Ֆելերբախի «հումանիզմը» ոչ այլ ինչ է, եթէ ոչ սպինօզմ՝ ազատւած նրա աստւածաբանական յաւելածից: Եւ հենց այդ սպինօփիզմի տեսակէտին (ազատւած Ֆելերբախի շնորհիւ նրա աստւածաբանան յաւելածից) յանդեցին Մարքսն ու Էնգելսը, երբ կարեցին իրենց կապերը իդէալիզմից:

Բայց ազատել սպինօփիզմը նրա աստւածաբանական յաւելածից նշանակում է երևան հանել նրա խսկան, մատերիալիստական բովանդակութիւնը: Նշանակում է, Մարքսի և Էնգելսի սպինօփիզմը հենց ժամանակից մատերիալիզմն է:

Այնուհետեւ, մտածողութիւնը կացութեան պատճառը չէ, այլ նրա հետեւանըք, նրա յատկութիւնը (Ֆելերբախն ասում է: — Folge und Eigenschaft): Ես զգում եմ և մտածում ոչ թէ որպէս ուրիշեկտ, նոկազրւած օրեկտին, այլ որպէս սուրեկտ — օրեկտ, որպէս իրական - նիւթական արարած: Եւ օրեկտը ինձ համար ոչ միայն շօշափիլի առար-

¹⁾ Werke, II, 350.

կայ է, այլ նոյնպէս իմ զգայութիւններիս միմքը, անհրաժեշտ պալմանը: Օրեկտիւ աշխարհը գտնուում է ոչ միայն ինձանից դուրս, նա կայ նոյնպէս իմ մէջ, իմ սեփական կաշուի մէջ: Մարդը միայն բնութեան մի մասն է, կեանքի մասը, դրա համար էլ նրա մտածողութեան և կացութեան միջև հակաղութիւն գոյութիւն չունի: Տարածութիւնն ու ժամանակը գոյութիւն ունեն ոչ միայն մտածողութեան համար. նրանք միաժամանակ կացութեան ձեւեր են: Նրանք իմ մտահայեցողութեան ձեւերն են: Բայց նրանք ալլպէս են միմիայն նրա համար, որ ես—ինքս ժամանակի ու տարածութեան մէջ ապրող մի արարած եմ և որ ես շօշափում եմ և զգում միմիայն որպէս ալլպիսի արարած: Էնդհանրապէս կացութեան օրէնքները միաժամանակ և մտածողութեան օրէնքներն են:

Այդպէս էր ասում Ֆէկերախը¹⁾: Եւ նոյնը, թէև երբեմն ուրիշ խօսքերով, ասում էր էնգելսր Դիւրինդի հետ ունեցած բանակուի ժամանակի. Սրդէն ալստեղից նկատելի է, թէ Ֆէկերախի փիլիսոփայութեան որպիսի կարեոր մասը մշտապէս ժոել է Մարքս—էնգելսի փիլիսոփայութեան մէջ: Եթէ Մարքսը սկսեց պատմութեան մատերիալիստական իր բացադրութիւնը չէ զելի իրաւունքի փիլիսոփայութեան քննադատութեամբ, դա միմիայն այն պատճառով, որ չէ զելի հայեցողական փիլիսոփայութեան (спекулятивная философия) քննադատութիւնը վերջացրել էր արդէն Ֆէկերախը:

Իր թէզիսներում նոյնիօկ Ֆէկերախին քննադատելիս, Մարքսը յանախ զարգացնում և լրացնում է հենց նրա մտքերը: Ունա մի օրինակ «իմացարանութիւնից», (гносеология): Ֆէկերախի առելով, մարդ նախ քան առարկալի մտմին մտածելը. ենթարկուումէ նրա ներգործմանը, զննում է այն, զգում: Մարքսը ի նկատի ունի Ֆէկերախի այդ միաքը, երբ ասում է. «Մատերիալիզմի գլխաւոր պակասութիւնը, արտաքին զգայարաններով իւրացւող

¹⁾ Werke, II, 334 և X, 186—187.

առարկայական աշխարհը քննում է միայն որպէս օբյեկտ կամ մտահայտեցնութիւն և ոչ թէ որպէս մարդկացին կոնկրէտ աշխատանք, ոչ թէ որպէս պրակտիկա, որպէս սուբյեկտ: Մատերիալիզմի այս պակասութեամբ է բացադրուում, ասում է այնուհետև Մարքսը, այն հանգամանքը, որ Ֆէկերախիր իր «Քրիստոնէութեան էութեան» մէջ որպէս մարդկամին իսկական գործունէութիւն համարում է միմիայն տեսական աշխատանքը: Աւրիշ խօսքերով նայնը կարելի է արտայացել այսպէս: Ֆէկերախը ցուց է առջիս, որ մեր Եւրոպ ճանաչում է օրեկտը միայն այն ժամանակ, երբ ենթարկեալում նրա ներգործմանը¹⁾ իսկ Մարքսը առարկում է. մեր Եւրոպ ճանաչում է օրեկտը, իր կողմից ներգործելով նրա վրայ Մարքսի միանգամայն նիշտ է. գեռ Ֆաուստը ասել է. «Եսկզրանէ էր գործ»: Ի հարկէ, Ֆէկերախին պաշտպանելու համար կարելի է առարկել, որ առարկաների վրայ մեր կատարած ներգործման պրոցեսսի ընթացքում մենք ճանաչում ենք նրանց յատկութիւնները միմիայն այն չափով, որչափ նրանք իրենց կողմից ներգործում են մեզ վրայ: Երկու գէպքումն էլ մտածողութեանը նախորդում է զգացողութիւնը, երկու գէպքումն էլ մենք նախ և առաջ զգում ենք առարկաների յատկութիւնները, իսկ յետոյ արդէն մտածում նրանց մասին: Բայց Մարքսը և այդ չէ բացասում: Նրա համար հարցը վերաբերում է ոչ թէ այն անվիճելի փաստին, որ զգացողութիւնը նախորդում է մտածողութեանը, այլ նրանում, որ մարդուն մտածելու են զրգում զիտաւորապէս այն զգացողութիւնները, որնք նա զգում է արտաքին աշխարհի վրայ ներգործելու պրոցեսսի ընթացքում: Եւ որովհետև արտաքին աշխարհի վրայ ներգործել թելազրում է նրան՝ նրա զոլութեան կամքը, դրա համար էլ Մարքսի մտ իմացարանութեան թէօրիան սերա կապւում է մարդկութեան կուլտուրայի պատմութեան, նրա մատերիալիստական հայեցակետի հետ: Իզուր

¹⁾ Dem Denken,—ասում է նա.—geht das Sein voran, ehe du die Qualität fühlst du die Qualität. «Werke», II, 253.

չէ, որ Ֆէլերբախի գէմ մեղ ալստեղ հետաքրքրող թէղիսն ուղղող նոյն հեղինակը իր «Կապիտալի-ի առաջին հատում գրում է. «Ներգործելով իրենից դուրս գտնուող բնութեան վրայ, մարդը զրանով փոփօխում է իր սեփական ըրնութիւնը»։ Այդ զրութիւնը իր խոր միտքը երեան է հանում միայն իմացարանութեան Մարքսի թէօրիայի լոյսի տակ։ Եւ մենք դեռևս կտեսնենք, թէ ինչպէս նրա արդ թէօրիան ուժեղ կերպով հաստատում է կուլտուրական զարգացման պատմութեամբ և նոյնիսի, ի միջի ալլոց, լեզւի մասին եղած գիտութեամբ։ Բայց և այնպէս պէտք է խոստովանել, որ Մարքսի իմացարանութիւնը ուղիղ գծով առաջ է գալիս Ֆէլերբախի իմացարանութիւնից, կամ, եթէ կամենում էր, այդ թէօրիան իսկապէս հէնց Ֆէլերբախի իմացարանութիւնն է, միայն խորացւած Մարքսի արած հանճարեղ ուղղումով։

Ի միջի ալլոց նկատենք, որ այդ հանճարեղ ուղղումը թերդրուել է «ժամանակի ողով»։ Այդ ձգտման մէջ—գիտել օրեկտի և ուրեկտի մէջ եղած փոխարարերութիւնը այն մոքով, երբ ոսւրեկտը երեան է գալիս ներգործական (активնայ) դերի մէջ, — տրտացոլւել է ժամանակի հասարական տրտմադրութիւնը, երբ մշակում էր Մարքսինգելսի աշխարհական կեցողութիւնը։ 1848 թ. լեզափոխութիւնը այն ժամանակ արգեն սարերի լետեռում չէր։

III.

Սուբէկտի և օրեկտի, մտածողութեան և կացութեան միասնութեան ուսմունքը, որ հաւասար չափով լատուկ է ինչպէս Ֆէլերբախին, նոյնպէս և Մարքս-Էնդէլսին, միաժամանակ և XVII և XVIII դարերի աւելի աչքի ընկնող ժամերիալիստների ուսմունքն էր։

Մի ուրիշ աեղ¹⁾ մենք ցոյց ենք աւել, որ Լոմենտրին Դիզրոն լանդեցին (թէ պէտք է աւելացնել, իւրաքան-

¹⁾ Խայիր մոր „Կրիտика наших կրիտиков“ ժողովածուի մէջ „Բերնիտեն և մատերիալիզմ“ յօդամու։

չի-ըլլ իրեն լատուկ ճանապարհով) այն աշխարհական թեան, որը «անման է սպինօփզմին», այսինքն նրա իսկական բովանդակութիւնը խեղաթիւրող թէօրիական լաւելածից զաւած սպինօփզմին, և որքան որ խօսքը սուրեկտի և օրեկտի միասնութեան մասին է, ապա ուրեմն հեշտ է ցոյց տար որ Գոբբուր նոյնպէս մօտիկ էր Սպինօզալին Բայց զա մեղ շատ հեռու կը ատանէ։ Եւ դա այնքան էլ կարևոր չէ։ Ընթերցողի համար աւելի հետաքրքիր կլինէր մատնանշել, որ ներկալումս իւրաքանչիւր նատուրալիստ, որը քիչ թէ շատ զբացւել է մտածողութեան և կացութեան փօխ-լարաբերութեան հարցով, լաւգում է նրանց միասնութեան մասին եղած այդ ուսմունքին, որի հետ մենք մանօթացանք Ֆէլերբախին։

Երբ Հէկոլին զրում էր. «Մէր օրերում ժամանակակից զիտութեան բարձրութեան զրայ կանգնած և վաստեր խնացող մարդկանցից ոչ ոք չի կասկածի այն բանում, որ հոգերանութեան հմբքերը պէտք է փնտուել ներւալին սիստեմի փիզիոգիայի մէջ», և որ այդպէս կոչւած անզու զօրծունէութիւնը ուղեղի ֆունկցիաների համախմբում է»²⁾, նա արտալայտել է հէնց այն, ինչ ասել է Ֆէլերբախը, միայն թէ Հէկոլին այդ խօսքերի հետ կապում էր աւելի մութ հասկացողութիւններ, որովհետեւ այդ խօսքերի հետ կապւած հասկացողութիւնները շատ աւելի անորոշ են, զրա համար էլ նա կարող էր փորձել իր վերև լիշտարակած հայեցակէտք միացնել իւմի փիլոսոփայական սկեպությունը հետո²⁾։

Ճիշտ այգպէս էլ այնքան ազմուկ հանած Հէկէլի սմօնիզմը» ոչ այլ ինչ է, եթէ ոչ զուտ մտաերիալիստական ուսմունք (և իր էւութեամբ մօտիկ Ֆէլերբախի ուսմունքին) սուրեկտի և օրեկտի միասնութեան մասին։ Բայց Հէկէլի շատ վատ ժանօթ էր մտաերիալիզմի պատմութեան հետ, զրա համար էլ նա հարկ է համարում կուել նրա սմիտկող-մանիսութեանը զէմ, մինչդեռ նարկաւոր էր, որ նու չանք

¹⁾ Hume, sa vie, sa philosophie, p. 108.

²⁾ ibid. p. 110.



գուէր ուստմասիրելու իմացաբանութեան մատերիալիստական այն թէօրիան, ինչ ընդունւած է Թէլերբախի և Մարքսի կողմից դրանով նա խուսափած կլինէր շատ սխալներից և ֆիակողմանիութիւններից, որոնք հնարաւորութիւն են տալիս նրա հակառակորդներին կոիւ մղել նրա դէմ փիլ խոփական տեսակէտից:

Նորագոյն մատերիալիզմին (Թէլերբախի-Մարքսի-Էնդէլսի մատերիալիզմին) բոլորովին մօտիկ է Աւգուստ Ֆօրելը, որը այդ արտակարել է իր մի շարք դրւածքների մէջ, օրինակ, „Gehirn und Seele“ գեկուցման մէջ, կարդացւած Վիենայում գերմանացի բժիշկների և բնագէտների 66-րդ համագումարում (1894 թ. սկագտեմբերի 26-ին)¹⁾: Այսուղ Ֆօրելը երբեմն ոչ միայն արտայալում է մտքեր, որոնք շատ մօտիկ են Թէլերբախի մաքերին, այլև (որ ուղղակի զարմանալի է) դասաւորում է իր փաստերը նիշտ այնպէս, ինչպէս դասաւորում է Թէլերբախը իր հիմունքները: Ֆօրելի ասելով իւրաքանչյուր նոր օր բերում է մեզ համոզեցուցիչ ապացուցներ, որ ուղեղի հոգեբանութիւնն ու բնախօսութիւնը ֆիզիոլոգիա ներկայացնում են իրենցից «միենոյն իրը» դիտելու երկու տարբեր եղանակներ միայն Ընթերցողը չի մոռացի անշուշտ վերն լիշտակած և այս հարցին վերաբերող Թէլերբախի համանման տեսակէտը: Այդ հայեցակէտը այսուղ կարելի է լրացնել հետևեալ գատողութիւններով: «Ես, — ասում է Թէլերբախը, — հոգեբանական օբեկտ եմ ինձ համար, բայց Փիզիբական օբեկտ եմ ուրիշի համար»²⁾: Վերջի վերշու Ֆօրելի գլխաւոր միտքը այն է, որ դիտակցութիւնը առւղեղի աշխատանքի ներքին ըէֆլէքս է»³⁾: Իսկ դա արգեն դուռ մատերիալիստական տեսակէտ է:

Բոլոր տեսակի իդէալիստներն ու կանտիստները, առարկելով մատերիալիստներին պնդում են, որ այն երեսլիները,

¹⁾ Համեմատել այնպէս նրա „Lâme et la système nerveux, hygiène et pathologie“ (Paris, 1906) գրի սրբորդ գլուխը:

²⁾ Werke, II, 348, 349.

³⁾ Die psychischen Fähigkeiten der Ameisen etc., München, 1901, S. 7.

որոնց մասին խօսում են Ֆօրելն ու Թէլերբախը, հասկածալի են մեզ միմիալն հոգերան ական կողմից: Այս առարկութիւնը խիստ որոշ ձևակերպել է Շէլլինգը, որը ասել է, թէ ահողին առ միշտ մնում է այն կղզին, որի վրայ նիւթի աշխարհից առանց թռիչքի չի կարելի ընկնելը: Ֆօրելը շտարակառ գիտէ ալդ, բայց նա համոզեցուցիչ կերպով ցոյց է տալիս, որ զիտութիւնը անհնարին կլինէր, ևթէ մենք լրջորէն վճռէինք դուրս չդալ ալդ կղզու սահմաններից: «Իւրաքանչիւր մտրդ, — ասում է նա, — ալդ դէպքում կունենար միայն իր սուրեալիզմի հոգեբանութիւնը (hätte nur die psychologie seines Subjectivismus)... և դրականապէս պէտք է կասկածէր արտաքին աշխարհի և միւս մարդկանց դոյլութեան մասին»¹⁾:

Բայց ալդպիսի կասկածը անմուռութիւն է: «Անալօգիական եղրակացութիւնները, բնական-գիտական մակածութիւնը (ինդուկցիա), մեր արտաքին հինգ զդարանների փորձի համեմատութիւնը ցոյց են տալիս մեզ արտաքին աշխարհի, ուրիշ մարդկանց և վերջիններիս հոգեբանութեան գոյութիւն ունենալը: Ճիշտ նոյզէս զրանք ցոյց են աալիս մեզ, որ համեմատական հոգեբանութիւնը, կենդանիների հոգեբանութիւնը, վերջապէս մեր սեփական հոգեբանութիւնը կը մնալին մեզ համար անհասկանալի և լի հակասութիւններով, եթէ մենք գիտելու լինենք հոգեբանութիւնը առեւէ կապի դէպի մեր ուղեղի գործունէութիւնը. առանց ալդ կապի հոգեբանութիւնը ամենից առաջ կը հակասէր էնէրգիայի պահպանման օրէնքին»²⁾:

Թէլերբախը ոչ միայն երեան է հանում այն հակասութիւնները, որոնց մէջ ընկնում են մատերիալիստական հայեցակէտ միտողները, այլև ցոյց է տալիս, թէ ինչ նանապարհով իդէալիստները մեփուսանում են իրենց «կղզու» վրար: Նո ասում է. «Ես կամ, ես ինքս ինձ համար եմ և զու—ուրիշի համար. բայց որպէս ալդպիսին ես կամ որպէս միմիայն զդաշնական ալսինքն նիւթական Գ. Պ.) արարած: Իսկ վերցական

¹⁾ Ibid. S. S. 7—8.

²⁾ Die psychischen Fähigkeit, նոյն երեսը:

տրամախութիւնը (разсудок) մեկուսացնում է ինքնամփոփ կացութիւնը որպէս սուբստանց, առամ, ես, Աստուած, ուստի ինքնամփոփ կացութեան կապը ուրիշների համար գոյութիւն ունեցող կացութեան հետ կամայական է թւում: Այն, ինչ մտաժում եմ ես զգայնականութիւնից դուրս (ohne Sinnlichkeit), մտաժում եմ առանց որևէ կապի¹⁾: Այդ խօսութեանը կիտազութիւնների հետ միաժամանակ նա վերլուծման է հեթարկում վերացականութեան (абстракция) այն պրոցեսը, որը բերաւ չէդէլի լօգիկալի ժագմանը որպէս դուախոսական (антологического) ուսմունքի²⁾:

Եթէ Ֆէկրբախը և նենար այն աեղեկութիւնները, որ առիս է մեզ ժամանակակից ցեղադրութիւնը (этнография), այն ժամանակ նա կարող էր աւելացնել, որ Փիլիսոփայական իդէալիզմը ոկիզըն է տանում նախապատմական ժաղովուրդներին յատուկ անիմիզմից: Բայց այդ բանը արդէն ցոյց է տւել է: Թէլլօրը և դա մասամբ արդէն ի նկատի են ունենում (թէն առաջմ տւելի շատ որպէս կուրեօգ, բան թէ որպէս կուլտուրական պատմական փաստ, որ ունի հսկայական տեսական իմացարանական նշանակութիւն) փիլիսոփայութեան մի բանի պատմաբաններ³⁾:

Ֆէկրբախի այս վիտողութիւններն ու փաստերը ոչ միայն լաւ լայտոնի էին և ուշադրութեամբ մտածւած Մարքսի և Էնդէլսի կողմից, այլև անկատակած, նշանաւոր չափով նպաստել են նրանց սեփական աշխարհահայեցքի մշակմանը: Եթէ յետագայում էնդէլսը վերարերում էր Ֆէկրբախին լաշորդած

¹⁾ Werke, II, 322. Փէյբրախի այդ խօսքըն վրայ ենք բարեկամ յանձնաւում պազանովի ուշադրութիւնը: Համեմատի նույնութեանը՝ 263:

²⁾ „Der absolute Geist Hegels ist nichts Anderes, als der abstrakte, von sich selbst abgesongerte 'soqe nante' endliche Geist, wie das unendliche wesen der Theologie nichts Anderes ist, als das abstracte endliche Wesen“, Werke II, 263.

³⁾ La civilisation primitive, Paris, 1876, tome II p. 143. Ի միջի սցոց պէտք է նկատել, որ դու մասին Ֆէկրբախն ունի խառնութ մի զարշակութիւն: Նա ասում է. „Der Begriff des obiects ist ursprünglich gar nichts Anderes als der Begriff eines anderen ich—so fasst der Mensch in der Kindheit alle Dinge als freithätige, willkürliche Wesen auf, daher ist der Begriff des objects überhaupt vermittelt durch den Begriff des gegenständlichen ich“. II, 332.

գերմանական փիլիսոփայութեանը խիստ արհամարհական վերպով, կա այն պատճառով, որ այդ փիլիսոփայութիւնը, նրա կարծիքով, վերականգնում է միմիայն այն հին սիալները, որոնց երեան էր հանել գեռես Ֆէկրախը:

Եւ իսկապէս դա այլպէս էլ է: Մատերիալիզմի նորագոյն քննադատներից և ոչ մէկը առաջ չէ բերել և ոչ մի փաստ, որ ջրած չլինեն կամ Ֆէկրբախը, կամ նրանից դեռ առաջ Փրանսիական մատերիալիստները: բայց «Մարքսի քննադատների» համար (Ե. Բէրնշտեն, Կ. Շմիդա, Գ. Կոչէ և այլն) վերմանական ամենանոր իմաստութեան աէկէկտիկ փիլիսոփայութեան մուրացիկ շփոթը բոլորովին նոր կերակուր է երեւում, նրանք կերակրում էին զրանով և աւսնելով: Որ էնդէլսը կարիք չէ համարում զբազւել զրանով, երեակայում էին, որ նա Ախուսափում է վերլուծել այն փաստերը, որոնք շատ վաղուց քննել էր նա և դտել բոլորովին անպէտք: Դա հին, բայց յաւիտեան նոր պատմութիւն է: Մկները երբէք չեն զագարի մատելուց, որ կատուն շատ աւելի ուժեղ է, քան առիւծը:

Ընդունելով Ֆէկրբախի և Ա. Ֆօրելի հայեցքների նման լինելը (ծասամք և միատեսակ լինելը), պէտք է նկատենք սական, որ Եթէ վերջինս ունէր զիխաւարապէս բնագիտական կրթութիւն, Ֆէկրբախը ծանօթ էր առակապէս փիլիսոփայական զիխաւարների հետո նրա համար է, որ Ֆօրելը սիալներ անում է, մինչդեռ նոյնը Ֆէկրբախի մասին ասել մենք չենք կարող: Ֆօրելը իր թէօրիան անւանում է նոյնացման հոգե—բնախօսական թէօրիա (психофизиологический теория тождества)¹⁾: Դրա դէմ ըստ էսութեան չի կարելի առարկել, որովհետեւ տէրմինալօգիան ընդհանրապէս պայմանական մի բան է: բայց որովհետեւ նոյնանման թէօրիան մի ժամանակ որոշակի կերպով կազմում էր իդէալիստական փիլիսոփայութեան հիմքը, զրա համար էլ Ֆօրելը աւելի լաւ

¹⁾ Խայիթ նրա „Die psycho—physiologische identitäts theorie als wissenschaftliches Postulat“ յօղածը „festschrift I. Rosenthal“ տղրկածուէ (Leinzig, 1906, eerste Theil, s. s. 119—132:

կաներ, եթէ ուղղակի, համարձակ և որոշ լայտարարէր իր ուսմունքը մատերիալիստական. բայց նա, ինչպէս երեսում է, պահպանած ունի տակաւին մի քանի նախապաշարութեան մատերիալիզմի մասին, դրա համար էլ ընտրել է այլ անուն իր թէօրիայի համար։ Ահա թէ ինչու մենք համարկ ենք համարում մատնանշել, որ ֆօրելի նոյնացման օրէնքը ընդհանուր ոչինչ չունի իդէալիստական նոյնացման օրէնքի հետ։

«Մարգսի քննադատները» այդ էլ չգիտեն։ Կ. Շմիդար մեղ հետ վիճարանելու ժամանակ մատերիալիստներին է վերագրում նորնանման իդէալիստական ուսմունքը։ Մինչդեռ իսկապէս մատերիալիզմ ընդունում է սուբեկտի և օբեկտի միասնութիւնը, և ոչ թէ նոյնացումը։ Եւ այդ բանը՝ լաւ պարզաբանել է կրկին Ֆէկրախը։

Ըստ Ֆէկրախի, սուբեկտի և օբեկտի, մտածողութեան և կացութեան միասնութիւնը իմաստ ունի միայն այն ժամանակ, երբ այդ միասնութեանը որպէս հիմք ծառայում է մարդը։ Դա կրկին հնչում է ինչ որ յատուկ «հումանիստական» կերպով, բայց Ֆէկրախով զբաղւող մարդկանց մեծ մասը հարկ չէ համարել աւելի լաւ մտածելու այն մասին, թէ ինչպէս է, որ մարդը ծառայում է որպէս հիմունք մատնանշած երկու հակագրութիւնների միասնութեան համար։ Իսկ դա Ֆէկրախը հասկանում է այսպէս։ «Որտեղ որ, — ասում է նա, — մտածողութիւնը ոչ թէ սուբեկտ է իր համարս, այլ իրական (այսինքն նիւթական Գ. Պ.) էութեան պրեգեկատը, միայն անտեղ միտքը կացութիւնից կարած մի ինչ որ բան չէ»¹⁾։ Այժմ հարց է առաջ գալիս. ո՞րտեղ, ո՞ր փիլիսոփայական սիստեմի մէջ մտածողութիւնը սոսուբեկտ է իր համար», այսինքն՝ մտածող անհատի մարմարկան գոյութիւնից անկախ անկախ մտածողութիւնը է միայն նոյն բանն ասում է նաև հեգէլլը։ Բայց Ֆէկրախը չէ բաւականանութ մտածողութեան և կացութեան մէջ եղած հակադրութեան ալգափիսի զուտ ձեական լուծումով։ Նա մտնանշում է այն, որ մարդուց, այսինքն իրական, նիւթական գոյութիւնից անկախ մտածողութիւն չկայ և չի կարող լինել։ Մտածողութիւնը ուղեղի գործունեութիւնն է։ «Բայց միայն ուղեղը այնքան է ժառանգում որպէս մտածողութեան գործարան, որքան նա կապւած է մարդու զինի և մտրմնի հետ»¹⁾։

լայտարարում, որ նրա, այդ էութեան մէջ վճռում է կայութեան և մտածողութեան մէջ եղած հակասութիւնը։ Եւ դա համար, որ նիւթից անկախ այդ էութեանը լատուկ է անկախ, ինքնուրոյն կացութիւն եւ այդ հակասութիւնը իսկապէս իր լուծումն ստանում է էութեան մէջ որովհետեւ ինչ է վերջ ի վերջոյ այդ էութիւնը։ Մտածողութիւն. Եւ այդ մտածողութիւնը գոյութիւն ունի, կայ, — անկախ որևէ այլ բանից։ Բայց հակասութեան այդ լուծումը ձեական լուծում է միայն։ Այդ լուծումը ստացում է այն բանով, որ (ինչպէս ասացինք վերևում) մեկուսացում է հակասութեան էլիմենտներից մէկը, — այսինքն՝ մտածողութիւնից անկախ կացութիւնը։ Կացութիւնը դառնում է որպէս մտածողութեան հասարակ յատկութիւն և երբ մենք ասում ենք, թէ ուեալ առարկան գոյութիւն ունի, դա նշանակում է միայն, որ նա գոյութիւն ունի մտածողութեան մէջ Այդ հարցը ալգափէս էր հասկանում, օրինակ, Շելլինգը։ Նրա համար մտածողութիւնը այն բացարձակ սկզբունքն է, որից անհրաժեշտորէն ծալը է առնում իրական աշխարհը, այսինքն բնութիւնը և «վերջնական» հոգին («կոնչնայ» այս)։ Բայց ինչպէս է ծալը առել ի՞նչ է նշանակում իրական աշխարհի գոյութիւնը։ Եւ դա ոչ այլ ինչ է, եթէ ոչ որպէս գոյութիւն մտածողութեան մէջ։ Շելլինգի համար տիեզերքը բացարձակ հոգու ինքնահայեցումն է միայն։ Նոյն բանն ասում է նաև հեգէլլը։ Բայց Ֆէկրախը չէ բաւականանութ մտածողութեան և կացութեան մէջ եղած հակադրութեան ալգափիսի զուտ ձեական լուծումով։ Նա մտնանշում է այն, որ մարդուց, այսինքն իրական, նիւթական գոյութիւնից անկախ մտածողութիւն չկայ և չի կարող լինել։ Մտածողութիւնը ուղեղի գործունեութիւնն է։ «Բայց միայն ուղեղը այնքան է ժառանգում որպէս մտածողութեան գործարան, որքան նա կապւած է մարդու զինի և մտրմնի հետ»¹⁾։

¹⁾ Werke, II, 362—363.

Հիմի մենք տեսնում ենք, թէ ինչ մարդք Ֆէլերախի համար մարդք կազմում է կացութեան ու մտածողութեան միասնութեան հիմքը: Այդ միտքը այն է, որ մարդք ոչ այլ ինչ է, եթէ ոչ որպէս նիւթական էութիւն, որ ընդունակ է մտածելու: Եւ եթէ մարդք այդպիսի էութիւն է, ուրեմն պարզ է, որ նրա մէջ չեն մեկուսացւում հակադրութեան էլէմենտներից և ոչ մէկը, — ոչ կացութիւնը, ոչ մտածողութիւնը, ոչ անիւթը), ոչ անդինը, ոչ սուրեկտը, ոչ օբեկտը: Դրանք հէնց միացւում են նրա մէջ, որպէս սուրեկտի — օրեկտի մէջ: «Ես կամ և մտածում եմ... միմիայն որպէս առուրեկտ—օբեկտ», ասում է Ֆէլերախը:

Լինել—չի նշանակում գոյութիւն ունենալ մտքի մէջ: Այդ տեռակէտից Ֆէլերախի փիլիսոփակութիւնը շատ աւելի պարզ է Դիցենի փիլիսոփակութիւնից: «Ապացուցել, որ ինչ որ բան գոյութիւն ունի, նշանակում է ապացուցել, որ այն մէնակ մտքի մէջ չէ, որ գոյութիւն ունի»): Եւ դա բոլորովին նիշտ է: Բայց դա հէնց միտքն ունի, որ մտածողութեան և կացութեան միասնութիւնը բոլորովին չի նշանակում և չի կարող նշանակել նրանց նոյնացումը:

Այստեղ երեան է գալիս մատերիալիզմի իշեալիզմից զանազան ամենակարեւոր հանդամանքներից մէկը:

IV.

Երբ ասում են, թէ Մարքսն ու Էնգելսը որոշ ժամանակաւ ընթացքում եղել են Ֆէլերախի հետեւորդներ, զրանով ոչ բանախ ուզում են ասել, որ երբ անցաւ այդ ժամանակը, Մարքս—Էնգելսի աշխարհայեացքը արմատապէս փոխւեց և տարրեւեց Ֆէլերախի աշխարհայեացքից: Ինչպէս երեւմ է, զրութիւնն ազգպէս է պատկերացնում է. Դիլը, որը զտնում է, որ Ֆէլերախի ազգեցութիւնը Մարքսի վրայ սովորաբար շատ չափազանցւում է²⁾, Դա խոշոր սիալ է:

¹⁾ Werke, X, 187.

²⁾ Handwörterbuch der Staatswissenschaften—n. V. S. 708.

Դադարելով Ֆէլերախի հետեւորդներ լինելուց, Մարքսն ու Էնգելսը չգաղարեցին նրա սեփական փիլիսոփական հայւացքների խոշորագուն մասն ընդունելուց: Եւ դա ամենից լաւ ապացուցում են այն թէզիսները, որոնց մէջ Մարքսը քննադատել է Ֆէլերախին: Այդ թէզիսները բոլորովին չեն մեկուսացնում Ֆէլերախի փիլիսոփակութեան հիմնական սկզբունքները. Նրանք միայն ուղղում են այդ սկզբանքները և որ գլխաւորն է, պահանջում են նրանց աւելի (քան Ֆէլերախը) հետեւողական գործադրութիւնը մարդուն շրջապատղ իրականութեան, մանաւանդ մարդու սեփական գործունէութեան բացադրութեան մէջ: Ոչ թէ մտածողութիւնն է որոշում կացութիւնը, այլ կացութիւնն է որոշում մտածողութիւնը: Այդ միտքն է, որ ընկած է Ֆէլերախի փիլիսոփայութեան հիմքերի հիմքում: Եւ նոյն միտքն է, որ Մարքսն ու Էնգելսը զրել են պատմութեան մատերիալիստական բացադրութեան հիմքում: Մարքսի և Էնգելսի մատերիալիզմը աւելի զարգացւած ուօմունք է, քան Ֆէլերախի մտածերիալիզմը: Բայց Մարքսի և Էնգելսի մատերիալիստական հայեացքները զարգացան հէնց այն ուղղութեամբ, ինչ ուղղութիւն որ գուցադրում է Ֆէլերախի փիլիսոփակութեան ներքին արամարանութիւնը: Ահա թէ ինչու այդ հայեացքները միշտ էլ պարզ չեն լինի (մանաւանդ նրանց փիլիսոփական կողմը) այն մարդկանց համար, որոնք չանք գործ չեն դնի պարզելու, թէ լիշեալ փիլիսոփակութեան որ մասն է մտել զիտական սոցիալիզմի հիմնադրների աշխարհայեացքի մէջ, որպէս նրա բազազրիչ մի էլէմենտը: Եւ երբ զուք, ընթերցող, հանդիպէք մի մարդու, որը զէս ու զէն է ընկնում պատմական մատերիալիզմի համար ափիլիսոփակութեան հիմնաւորումն զանելու, զուք կարող էք վստահ լինել, որ այդ խորիմաստ մահկանացուն քիչ, առաջ լիշտաց տեսակէտից խիստ մեծ պակասութիւն ունի:

Բայց թողնենք խորիմաստ մարդկանց: Ֆէլերախի մասին իր երկրորդ թէզիսում Մարքսը բոլորովին մատեւում է ամենադժւար հարցին այն խնդիրների, որոնք նա պէտք է լունագիրացնեն ունի:

ծէր հասարակական մարդու պատմական «փորձառութեան» շրջանակում՝ սուբեկտի և օբյեկտի միասնութեան մասին ունեցած Ֆէլերբախի ճիշդ հասկացողութեան օղնութեամբ։ Այդ թէզիսն ասում է. «Մատերիալիստական ուսմունքն այն մասին, որ մարդիկ հանգամանքների ու դաստիարակութեան արդիւնք են... մոռանում է, որ հանդամանքները փոփոխում են հէնց իրենք մարդիկ, որ դաստիարակիչք պէտք է հէնց ինքն էլ դաստիարակւած (ինի): Եւ եթէ այդ խնդիրը վճռաւած է, կը նշանակէ պատմութեան մատերիալիստական բաշագրութեան «գաղտնիքը» դանւած է: Բայց Ֆէլերբախը չկարողաւ վճռել այդ խնդիրը։ Պատմութեան մէջ նա (նման 19-րդ դարի Փրանսիական մատերիալիստներին, որոնց հետ նա ունի շատ ընդհանուր հօղմեր) մնում է իդէալիստ Այստեղ Մարքունդիլոր պէար է կառուցանեին մի նոր բան, օգտակազմ հասարակական զիտութիւններից, զիտաւորապէս միապետութեան վերականգնման դարեշրջանի Փրանսիական պատմաբանների մինչ այդ կուտակած տեսական նիւթերից։ Բայց այստեղ էլ Ֆէլերբախի փիլիսոփայութիւնը տւառ նրանց մի քանի թանկարժեք ցուցմուքներ Ֆէլերբախն ասում է. «Գեղարւեստը, կրօնը, փիլիսոփայութիւնն ու զիտութիւնը, մարդկալին էութեան արտայտումն ու լայտնութիւնն են միայն»¹⁾։ Դրանից իտուում է, որ «մարդկալին էութիւնը» իր մէջ պարփակում է բոլոր գաղափարների բացադրութիւնը, այսինքն այն, որ վերշինների զարգացումը պայմանաւորւում է «մարդկալին էութեան» զարգացումով։ Ի՞նչ է նշանակում դա։ Ֆէլերբախը պատասխանում է. «Մարդկալին էութիւնը կալանում է միմիայն ընդհանուրի մէջ, մարդը մարդու հետ միանալու մէջ»²⁾։ Դա շատ անորոշ է։ Այստեղ նոյնպէս մէնք տեսնում ենք այն սահմանը, որից գէնը չանցաւ Ֆէլերբախը։ Բայց այդ սահմանի միւս կողմում հէնց սկսում է Մարքունդիլոր գտած պատմութեան մատերիալիստական բացադրութեան բնագաւառը։ Այդ բացադրութիւնը հէնց պարզում

¹⁾ Werke, II, 343.

²⁾ Werke, II, 344.

է մեզ այն պատճառները, որոնք որոշում են (մարդու զարգացման ընթացքի ժամանակ) արնդհանուրը, մարդը մարդու հետ միասնանալը, այսինքն՝ մարդկանց փոխադարձ լարարիրութիւնները։ Այդ սահմանադիմը «չ միայն բաժան մոռան ու մարդիկ հարցանալից, այլև վկայում է նրանց իրար մօտիկ լինելը»։

Վեցերորդ թէզիսը Ֆէլերբախի մասին ասում է, «ը բոլոր հասարակական յարաբերութիւնների ամբողջութիւնը կազմում է մարդու էութիւնը։ Դա շատ աւելի որոշ է, քան այն, ինչ որ ասում է Ֆէլերբախը. շատ աւելի քան որևէ այլ տեղ, երևան է դալիս այստեղ աւելի քան որևէ այլ տեղ, երևան է դալիս Մարքսի աշխարհականացքի սկզբնաւորման կազմը Ֆէլերբախի փիլիսոփակութեան հետ»։

Երբ Մարքսը գրում էր այդ թէզիսը, նա արդէն զիտէր ոչ միայն այն ուղղութիւնը, որի մէջ պէտք էր վինտուել ինդիրի լուծումը, այլև ինքը այդ լուծումը։ «Իրաւունքի չէղեան փիլիսոփայութեան քննադատութիւնը» իր աշխատութեան մէջ նա ցոյց է աալիս, որ հասարակութեան մէջ մարդկանց յարաբերութիւնները, «իրաւական յարաբերութիւնները, ինչպէս և պետական կեանքի ձեերը»—գրում է նա այդ գրքում, —չեն կարող բացադրւել «չ իրենք իրենցով, ոչ էլ այսպէս կոչւած մարդկալին հոգու զարգացմամբ. այդ յարաբերութիւններն ու պետական կեանքի ձեերը չենուում են մարդկալին կեանքի նիւթական պայմանների վրայ, որոնց ամբողջացումը, 18-րդ դարու անգլիացինների և Փրանսիացինների օրինակով, չէղելը անւանում է բազարացիական հասարակութիւն։ իսկ բաղաբացիական հասարակութեան կադարձութիւնն արդէն պէտք է փնտուել նրա տնտեսութեան մէջ»։

Այժմ մնում է բացադրել տնտեսութեան ծագութեան զարգացումը, որպէս զի լրիւ լինի այն խնդրի լուծումը, որը չկարողացաւ տալ մատերիալիզմը ամբողջ դարեշրջանների ընթացքում։ Այդ բացադրութիւնը հէնց տւել են Մարքսն ու Էնդկւր։ ինքն ըստ ինքնամ հասկանալի է, որ խօսելով այդ խոշոր խնդրի լրիւ լուծման մասին, մենք ի նկատի

ունենք խնդրի միայն ընդհանուր, հանրահաշւական վճիռ, որը չկարողացաւ տալ մատերիալիզմը ամբողջ գարեջանների ընթացքում: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ խօսելով լրիւ լուծման մասին, մնենք ի նկատի ունենք ոչ թէ հասարակական զարգացման թւարանութիւնը, այլ նրա հանրահաշիւր. ոչ թէ առանձին երեսիթների պատճառների ցուցադրումը, այլ ցուցադրումը այն բանի, թէ ինչպէս պէտք է վարել՝ այդ պատճառները դանելու համար իսկ գանցանակում է, որ պատճութեան մատերիալիստական բացադրութիւնը ունի ամենից առաջ մէ թռոգական նշանակութիւն: Այդ բանը շատ լաւ էր հասկանում էնդէլսը, երբ գրում էր. «Մեղ պէտք են ոչ այնքան՝ մերկ հետեւնըները, որքան ուսումնասիրութիւնը (das Studium). հետեւնըները—ոչինչ են, եթէ վերջնենք նրանց անկախ այն զարգացումից, որ բերում է մեզ այդ հետեւնընքներին»¹⁾: Բայց զա լահախ չեն հասկանում ոչ «Մարքսի ըննադանները», որոնց, ինչպէս ասում են, Աստւած ողորմի, ոչ էլ նրա «հետեւորդներից» մի բանիսը, որ աւելի վատ է: Միքել Անչելոն ասում է իր մասին. «Իմ գիտելիքները կատեղծեն բաղմաթիւ տգէտները: Եւ նրա այդ մարդարեւութիւնը, զժբաղդարար, իրականացաւ: Ներկայումս տգէտներ ստեղծում են մարքսիստական գիտելիքները: Դրանում պէտք է մեզադրել ի հարկէ, ոչ թէ Մարքսին, այլ նրանց, ովքեր ցնդաբանում են նրա անունից: Բայց ցնդաբանութիւններից խուսափելու համար անհրաժեշտ է ամենից առաջ հասկանալ պատճական մատերիալիզմի մեթոգական նշանակութիւնը»:

V.

Մատերիալիզմի վերաբերեալ Մարքսի և էնդէլսի կատարած ամենախոշօր ժառայութիւններից ընդհանրապէս մէկն էլ այն է, որ նրանք մշակել են ուզի՞զ մեթոգ: Կենարունացները իր շանթերը էնդէլսի գիտութիւնների խուսափելու համար անհրաժեշտ է ամենից առաջ հասկանալ պատճական մատե-

¹⁾ Nachlass, I, 477.

կան Էլէմենտի գէմ պալբարելու վրայ, Ֆէյբբախը բիշ էր գնահատում և օգտագործում այդ գիլիստիայութեան դիալեկտիկան էլէմենտոր: Նա ասում է. «Յսկական գիտեկտիկան առանձնացած մտածողի մեկուսի մենախօսութիւն չէ. գիտեկտիկան մենախօսութիւն է. հս-ի և դու-ի միջեն:» Բայց առաջին, էնդէլսի համար նոյնպէս զիալեկտիկան առանձնացած մտածողի մենախօսութիւն նշանակութիւն չունի. և երկրորդ, Ֆէյբբախի նհատողութիւնը հիշգ որոշում է գիլիստիայութեան ելման կէտը, բայց ոչ նրա մեթոգը: Այդ բաց տեղը լրին: Մարքսն ու էնդէլսը. նրանք հասկացան, որ սխալ կը լինէր—կռւելով էնդէլսի հայեցողական գիլիստիայութեան գէմ աչքաթող անել նրա զիալեկտիկան¹⁾: Մի քանի ըննադատներ պնդում են, որ Մարքսը սկզբում, երբ կառեց իր կապերը իզեալիզմի հետ, վերաբերում էր գէպի գիտեկտիկան նայնպէս խիստ անսարքերի: Բայց այդ կարծիքը, որ առաջին հայեցքից հաւանական է թւում, շրւում է մեր վերև լիշտակած այն փաստով, որ „Deutsch-französischen Jahrbüchern“—ում էնդէլսն ասում էր, որ մեթոգը հայեցքների նորագոյն սիստեմի հոգին է²⁾: Յամենական գէպս «Փիլիսոփայութեան աղքատութեան» („Ницета философии“) երկրորդ մասը այլևս տեղ չի թաղնում կասկածելու, որ Պրուդոնի հետ փարած իր բանակութիւնը շրջանում Մարքսը շատ լաւ հասկանում էր գիտեկտիկան մեթոզի նշանակութիւնը և կարողանում էր գեղեցիկ կերպով օգտագործել այն: Պրուդոնի հետ փարած բանակութիւնը մէջ Մարքսի տարած լաղթութիւնը կարելի է համարել մի լաղթութիւն, որ տանում է գիտեկտիկօրէն մտածող մարդը այնպիսի մարդու վերաբերեալ, որի համար պարզ չէ գիտեկտիկանի ընութը, բայց որը փորձում է կիրառել զիալեկտիկանի մեթոզը կապիտալիստական հասարակարդը վերլուծելիս: «Փիլիսոփայութեան աղքատութեան» նոյն երկ-

¹⁾ Werke, II, 345.

²⁾ Բայց նույնական ու թէ ինը իրան, այլ ունիանը առաջ կողմանից ները. „Wir bedürfen“, առաջ է նա, խզ նրա կողմանից ները թիւ պատկանում էր անհամած նաև Մարքսը:

բորդ մասը ցոյց է տալիս, որ արգեն ալզ ժամանակ Մարքոր Հեղեղի զուտ իդեալիստական բնոյթ կրող դիալեկտիկան, որը այդպէս էլ պահպանել էր Պրուդոնը (ինչքան որ Պրուդոնը բնդհանրպէս կարողացել է իւրացնել այն), դրել էր մատերիալիստական հիմքի վրայ¹⁾:

Յետազայում Մարքոր մատերիալիստական դիալեկտիկան բնորոշելիս դրում է. «Հեղեղի համար տրամաբանական պրոցեսոր՝ որ վերածում է անկախ սուբէկտի իդէա անւան տակ, իրականութեան Դէմիուրդն է. իսկ իրականութիւնը նրա արտաերկութն է միայն: Իսկ ինձ համար, ընդհակառակը, իդեալականը մարդկալին դլխում մշակւած և վերածւած նիւթականն է»: Այդ բնօրոշումը ցոյց է տալիս, որ Մարքոր համաձայն է Ֆէյրբախի հետ, առաջին, Հեղեղի «իդէալի» մասին ունեցած հայեցքի վերաբերեալ, և երկրորդ, մտածողութեան և կեանքի յարաբերութեան հարցի վերաբերեալ: Հեղեղի դիալեկտիկան (ոտաների վրայ զնել) կարող էր միայն այն մարդը, որը համոզւած է Ֆէյրբախի փիլիսոփայութեան հիմնական խնդրի ուղիղ լինելու մէջ, որն է. ոչ թէ մտածողութիւնն է պայմանաւորում. կացութիւնը, այլ կացութիւնը՝ մտածողութիւնը:

Մատերը դիալեկտիկան խառնում են զարգացման թէօրիայի հետ: Դիալեկտիկան իսկապէս այդպիսի ուսմունք է, բայց էապէս տարբերում է աէվոլիցիալին վուլդար թէօրիալից, որը ամրողապէս հիմնած է այն օկզունքի վրայ, որ «չ բնութիւնը, ոչ պատմութիւնը թոփչքներ չեն անում և որ աշխարհում բոլոր փոփոխութիւնները կատարեւում են միմիայն աստիճանաբար»: Դեռևս Հեղեղը ապացուցեց, որ զարգացման ուսմունքի նման հասկացողութիւնը անհիմն է ու ծիծաղելի:

«Երբ ուզում են հասկանալ որեէ բանի ժագումը կամ անչետացումը, — առում է նա իր «Լոգիկալի» առաջին հատարում, — սովորաբար երեակալում են, որ ալզ բանը պարզում են ժագման կամ անչետացման աստիճանաբար:

¹⁾ Սայիք „Հիդետա ֆիլոսոփի“-ի II մասը, առաջին եւ երկորդ „Նկարութիւնները“:

Նութիւնը պատկերացնելու շնորհիւ: Սակայն կեանքի փոփոխութիւնները կատարուում են ոչ միայն որոշ քանակութեան մի ուրիշ քանակութիւն դառնալու շնորհիւ, այլ որակալին տարբերութիւններ գտննալու շնորհիւ և ընդհակառակը. այդպիսի անցումը ընդհատում է աստիճանականութիւնը, փոխարինելով մի երկույթ մի ուրիշով²⁾: Եւ ամեն անգամ, երբ ընդհատում է աստիճանականութիւնը, առաջանում է թոփչքը: Այնուհետև Հեղեղը մի շարք օրինակներով ցոյց է տալիս, թէ ինչպէս յանախ բնութեան և պատմութեան մէջ առ զի են ունենում թոփչքներ, երեան հանելով վուլդար «էվոլիցիալի» թէօրիալից, հիմքում ընկած տրամաբանական ծիծաղելի սիալլը: «Աստիճանական ուսմունքի հիմքում, նկատում է նա, — ընկած է այն պատկերացումը, որ առաջող երեղոյթը արգէն ունի իրականութեան մէջ և անհնատելի է միայն շնորհիւ իր փոքրութեան: Ճիշտ նոյնպէս, խօսելով աստիճանական ոչնչացման մասին, երեակալում են, որպէս թէ տւեալ երեղոյթի մահացումը, կամ այն երեղոյթը, որ պիտի բռնէ նրա տեղը, արգէն գոլութիւն ունի, թէկ առ ալժմս անհնատելի... Բայց դրանով կորչում է ամեն մի հասկացողութիւն ծագման և ոչնչացման մասին... Մադումը կամ ոչնչացումը բացատրել փոփոխութեան աստիճանականութեամբ, նշանակում ամեն բան վերածել ձահձրալի նոյնարանութեան և առաջացող կամ ոչնչացող երեղոյթը պատկերացնել արգէն պատրաստի զրութեան մէջ: (Այսինքն, արդէն առաջացող կամ արգէն ոչնչացող. Գ. Պ.²⁾)

Մարքոր և Հեղեղը ամրողապէս իւրացրին Հեղեղի դիալեկտիկական ալզ տեսակէտը զարգացման պրօցէսսի մէջ թոփչքների անխօսափելիութեան վերաբերեալ էնդէլուսը զարգացնում է այդ տեսակէտը Դիւրինգի հետ ունեցած բանակուփի մէջ, «զնելով այն ուների վրայ», այսինքն — մատերիալիստական Փունդամենտի զրար:

¹⁾ Wissenschaft der Logik, erster Band, Nürnberg 1812 s. s. 313—314
²⁾ „Թուչերներ“ արցի մասին սայիք մըր որոշիւր—„Որը Ռ. Ռիկոմիրա“, Ը. Պետ. ուժ. Մ. Մալոյն, սրբ. 6—14.

Այդպէս, նա ցոյց է տալիս, որ ուժի մի տեսակը չի կարող մի ուրիշ տեսակի փոխւել առանց թռիչքի¹⁾: Այդպէս, ժամանակակից քիմիայի մէջ նա զտնում է փաստեր, որոնք հիմնաւորում են քանակութիւնը որակի անցնելու գիտեկտիկական թէօրիան²⁾: Էնդէլսի համար ընդհանրապէս գիտեկտիկական մտածողութիւնը հիմնաւորում է կեանքի դիալեկտիկական յատկութիւններով: Այսակա նոյտէս կացութիւնը պայմանաւորում է մտածողութիւնը:

Մատերիալիստական գիտեկտիկայի աւելի մանրամասն բնորոշման մէջ չմտնելու համար (գիտեկտիկայի յարարերութիւնը դէպի այն, ինչ կարելի է անւանել ստորին լոգիկայի և ստորին մաթեմատիկայի զուգահեռութեան, նայիր «Լի զվեդ Ֆէկրախ» բրոշիւրի մէր թարգմանութեան բառաջարանը), մներ կիշեցնենք ընթերցողին, որ զարդացման պրօյէսսի մէջ միմիան աստիճանական փոփոխութիւններ նկատող թէօրիան վերցին քսանամեակի ընթացքում սկսեց իր ոսների ատակի հողը կորցնել նոյնիսկ բնախօսութեան (նիօլոգիա) մէջ, ուր նաև վայելում էր ընդհանուր համակրանք: Այդ աւակէտից Սրբան Դոտիէի և հուզո դէ Փրիսի աշխատութիւններին, ինչպէս երեսում է, վիճակւած է մի նոր զարադրութակացմել: Բաւական է առել, որ Դր.- Փրիսի մուտացիաների թէօրիան տեսակների թռիչքային զարգացման ուսմունքն է: (Նայիր նրա երկնատորեան աշխատութիւնը. „Die mutationen Theorie“ Leipzig 1901—1903, նրա դիֆերատ—„Die Mutationen und der Mutations-perioden bei der Entstehung der Arten, Leipzig, 1901 և Կալիֆորնիայի համալսարանում նրա կարգացած դասախոսութիւնները, որոնք գերմաներէն թարգմանութեամբ լոյս տեսան հետեւեալ վերադրով. — Arten und Varietäten und ihre Entstehung durch die Mutation, Berlin, 1906):

¹⁾ Bei alles Allmäligkeit bleibt der Uebergang von einer Bewegungsform zur andern immer ein Sprung, eine entscheidende Wendung. So der Uebergang von der Mechanik der Weltkörper zu den kleineren Massen. Zu der mechanik der Moleküle—die Bewegungen umfassend, die wir in der eigentlich sogenannten Physik untersuchen“ ուսցի. Dühring's Umwälzung. tr. p. 57.

²⁾ Ibid. S. 128.

Այդ աչքի ընկնող նատուրալիստի կարծիքով աեսակների ծագման Դարվինի թէօրիայի թռիլ կողմը հէնց այն միտքն է, ըստ որի աեսակների ծագումը կարելի է բացագրել ասախնանական փոփոխութիւններով¹⁾: Էնտաքրելի է նոյնպէս և շատ աեղին Դրմբիսի այն նկատողութիւնը, թէ աեսակների ծագման ուսմունքի աստիճանական զարդացման թէօրիայի տիրապետութիւնը խիստ աննպաստ էր այս ինչը ինչըն վերաբերող հարցերի փորձնական համար²⁾:

Օգտակար կլինէր աւելացնել նաև հետևեալը: Ժամանակակից բնագիտութեան մէջ բաւականին արագ տարածւում է, զիսաւորապէս նոր լամարքիստների մէջ, նիւթի այսպէս կոչւած շնչաւորման ուսմունքը, այսինքն այն, որ ընդհանրապէս նիւթը, մանաւանդ իւրաքանչիւր կազմակերպւած նիւթ (Организованная материя) ունի որոշ չափի զգայնականութիւն: Այդ ուսմունքը, որ երբեմն զիտում է որպէս մատերիալիզմին հակառակ մի ուսմունք (օրինակի համար նայիր Ռ. Դ. Ֆրանսէին Der heutige Stand der darwinischen Fragen, Leipzig 1907), իսկապէս (նիշտ հասկանալու գեպըսում) ոչ այլ ինչ է, եթէ ոչ ժամանակակից բնագիտութեան լեզով արտալայտւած Ֆէկրախի մատերիալիստական ուսմունքը կացութեանն մտածողութեան, օրեկտի և սուրեկտի միասնութեան մասին³⁾: Կարելի է վստահորեն պնդել, որ այդ ուսմունքը իւրացրած Մարքսն ու Էնդէլսը կվերաբերեին դէպի լիշտակած, — ճիշդ է, առակմա խիստ վաս մշակւած, — բնագիտական ուղղութեանը շատ մեծ հետաքրքրութեամբ:

Ճիշդ է նկատում Հերցէնը, որ Էնդէլի փիլիսոփայութիւնը, որը շատերը համարում են մեծաւ մասմբ պահպա

¹⁾ Die Mutationen, S. S. 7—8.

²⁾ Artenete, 421.

³⁾ Յանենայն պէս շահուր և մոռանակ, որ ուսկը «մատերիալիզման» թէօրիան Ծնունդ էր 18-րդ դարի Պրանտական շատ մատերիալիզման: Սպիտակը մասին իսուր խոսում:

նողական, յեղափախութեան իսկական հանրահաշիւն է: Բայց Հեգելը իր ալլ հանրահաշիւր բնաւ գործադրութեան մէջ չէր դնում գործնական կեանքի էական հարցերի վերաբերեալ հայեցողական էլեմենտը անհրաժեշտօքէն մացնում էր մեծ իդէալիստի փիլիսոփայութեան մէջ պահպահականութեան ոգի: Բոլորովին այլ բան ենք տեսնում մենք Մարքսի մատերիալիստական փիլիսոփայութեան մէջ: Յեղափոխական «հանրահաշիւր» հանդէս է գալիս նրանում իր դիալեկտիկական մեթոդի անդիմադրելի ոլմի ամբողջ թափով: Մարքսն ասում է. «Իր մթագնած ձևով դիալեկտիկան գերմանական մօդա էր, որովհետեւ այն որպէս թէ արդարացնում էր իրերի դուռըթիւն ունեցող զրութիւնը: Իսկական դիալեկտիկան անհանոյ է բուրժւազիալին և նրա թէօրետիկներին, որովհետեւ այն բացադրելով գոյութիւն ունեցածը, բացադրում է նոյնպէս նրա բացասումը և նրա անխուսափելի ոչնչացումք. — որովհետեւ այն հետազոտում է իւրաքանչիւր տեել ձեր նրա շարժման ընթացքի մէջ, այսինքն հետազոտում է նրա փոփոխուղ կողմերը. որովհետեւ այն չի կանդ առնում ոչնչի առաջ, լինելով էապէս քննող և յեղափոխական»:

Դիտերով մատերիալիստական դիալեկտիկան ռուս գրականութեան պատմութեան տեսակէտից, կարելի է ասել, որ միայն դիալեկտիկան առաջին անդամ տւառ անհրաժեշտ և ամբողջական մեթոդ վճռելու այն հարցը ամբողջ իրականութեան բանական լինելու մասին, որի վրայ այնպէս տանջւում ու աշխատում էր ձեր հանճարեղ թելինսկին¹⁾: Միայն Մարքսի դիալեկտիկական մէթոդը կիրառելով ոռուս կեանքի ուսումնասիրութեան մէջ ցոլց տւառ մեղ, թէ ինչ կար նրանում իրական և ինչ թւռում էր միայն որպէս այլպիսին:

¹⁾ Կայիր մար յուլիսը «Թելինսկին և բանական իրականութիւն» — «Զա պաճառ լեռ» ժողովածում:

Անցնելով պատմութեան մատերիալիստական բացադրութեանը, մենք, ինչպէս տեսանք, ամենից առաջ հանդիպում ենք այն հարցին, թէ որոնք են հասարակական յարաբերութիւնների զարգացման իսկական պատճառները: Մենք որպէս գիտենք, որ «Քաղաքացիական հասարակութեան անատօնմիան» որոշում է նրա տնտեսութեամբ: Բայց ինչո՞վ է պայմանաւորւած այս վերջինը:

Այդ հարցին Մարքսը պատախանում է այսպէս. «Հասարակական արագդրութեան մէջ մարդիկ հանդիպում են որոշանութեշտ, նրանց կամքից անկախ յարաբերութիւնների — արտադրական յարաբերութիւնների, որոնք համապատասխանում են նրանց նիւթական արտադրական ոյժերի զարգացման որոշ աստիճաննին: Այդ արտադրական յարաբերութիւնների ամբողջութիւնը կազմում է հասարակութեան տնտեսական ստրուկտուրան, այն ուշադիմքը, որի վրայ կառուցւում է իրաւական և քաղաքական վերնաշենքը»¹⁾:

Մարքսի այդ պատախանով արդէն տնտեսութեան զարգացման վերաբերող ամբողջ հարցը կենարունացւում է այն բանի վրա, թէ ինչ պատճառներով է պայմանաւորւած հասարակութեան սրամագրութեան տակ գտնելող արտադրական ոյժերի զարգացումը: Իսկ իր այդ վերջին ձերի մէջ հարցը վճռում է ամենից առաջ աշխարհագրական միջավայրի լատկութիւնների մատնանշումով:

Դեռ Հեգելը իր փիլիսոփայութեան պատմութեան մէջ ցոլց է տալիս «համաշխարհային պատմութեան տշխարհագրական աստանի» կարևոր գերը: Բայց որպէս հետեւ Հեգելի համար ամեն մի զարգացման պատճառը վերջի վերջու իդէան է և որովհետեւ նա անցողակի կերպով և միմիայն երկրորդական դէպքերում դիմում է, կարծէք, հակառակ իր կամքի, երևոյթների մատերիալիստական բա-

¹⁾ Կայիր „Zur kritik der politischen Oekonomie“ — յառաջարանը. Կայուսիրէն թարգմանութիւնը:

դադրութեանը, դրա համար էլ չէգէլը անկարող եղաւ օգտագործել աշխարհագրական միջավայրի խռոր պատմական նշանակութեան վերաբերեալ իր արտալայտած խորապէս նիշդ հայեացը և տալ այդ հայեացըից բղիսող բոլոր արդասաւոր եզրակացութիւնները. Այդ եզրակացութիւնները լրիւ կերպով տւաւ միմիայն մատերիալիստ Մաքսը:

Աշխարհագրական միջավայրի լատկութիւնները ընորոշում են բնութեան՝ ինչպէս այն բոլոր առարկաները, որոնք ժառալում են մարդու կարիքներին բուարարելու համար, նոյնպէս և այն առարկաները, որոնք մադիկ իրենք արտադրում են նոյն նպատակի համար. Այսպէս, որուեղ որ մետաղներ չկային, տեղական ցեղերը չեն կարող սեփական ոլժերով գուրս գալ քարի գարի սահմաններից: Ճիշդ նոյնպէս—որպէսզի նախնական ձկնորսները և որսորդները կարողանային պարագել անասնապահութեամբ և երկրագործութեամբ, աներաժեշտ էին աշխարհագրական միջավայրի համապատասխան լատկութիւններ, ալմինքն, ներկալ դէպում,—համապատասխան բուսականութիւն և կենդանական աշխարհ: Լ. Գ. Մօրգանը նկատում է, որ բնտերացման ընդունակ կենդանիների բացակալութիւնը արևմտեան կիսագնդում և երկու կիսագնդերի բուսականութեան սպեցիֆիկ տարրերութիւնը մեծ տարրերութիւն մտցրեց կիսագնդերի ընակիչների հասարակական զարգացման ընթացքի մէջ¹⁾: Հիւսիսային Ամերիկայի կարմրամորթների մասին Վայցն ասում է. ԱԲՆՏՈՒՄԻ կենդանիներ նրանք բոլորովին չունին: Դա շատ կարեսր է, որովհետեւ այդ հանդամանը մէջ է նրանց զարգացման ստորին աստիճանի վրայ մնալու դիմուոր պատճառը²⁾: Եվէլնֆուրտը հաղորդում է, որ երբ Աֆրիկայի որոշ վայրում առաջ է գալիս գերբնակչութիւն, այդ դէպքում աւել վայրի ազգաբնակութեան մի մասը գաղթում է, փոխելով երբեմն իր կենցաղը համաձայն աշխարհագրական մի չափը:

1) Die Urgesellschaft, Stuttgart 1891, s. s. 20—21.

2) Au coeur de l'Afrique, Paris 1875, tome 1, p. 199.

այդ պարապում էին երկրագործութեամբ, դառնում են որ սորդներ, իսկ այն ցեղերը, որոնք մինչ այդ ապրում էին շնորհիւ իրենց հօտերի, սկսում են պարապել երկրագործութեամբ¹⁾: Նրա ասելով երկաթով հարուստ տեղերի (որ բըռնում են կենտրոնական Աֆրիկայի խոշորագույն մասը) բնակիչները «բնականօրէն սկսեցին պարապել երկաթի մշակութեամբ»²⁾:

Բայց դա զեռ բոլորը չեն: Դեռևս զարգացման ամենաստորին աստիճանի վրայ մարդկային ցեղերը սկսում են փոխարձ յարաբերութիւնների մէջ մտնել իրավ հետ, փոխանակելով իրենց արդիւնքները: Դրանով այդ ցեղերից իւրաքանչիւրի արտադրական ոլժերի զարգացման վրայ ներգործող աշխարհագրական միջավայրի սահմանները լայնանում են և արագացնում այդ զարգացման ընթացքը: Բայց հասկանալի է, որ նման յարաբերութիւնների առաջացման և սղանականման գժւարութիւնն ու հեշտութիւնը նոյնպէս կախում ունի աշխարհագրական միջավայրի լատկութիւններից. զեռ չէգէլը առում էր, որ ծովերն ու գետերը մերձեցնում են ծորդիկանց, մինչդեռ յենները բաժանում են նրանց իրարից: Սակայն ծովերը մերձեցնում են մարդկանց արտագրական ոլժերի զարգացման համեմատաբար արելի բարձր աստիճանի վրայ. աւելի ստորին աստիճանի վրայ—ծովը, համաձայն Բայցելի իրաւացի նկատողութեան, խիստ գժւ արացնում է ծովով բաժանուած ցեղերի յարաբերութիւնները³⁾: Բայց ինչպէս էլ լլինի, այսուամենալինւ անկասկած է, որ ինչըան աւելի բազմակողմանի են աշխարհագրական միջավայրի լատկութիւնները, այնքան աւելի այդ միջավայրը նպաստաւոր է արտագրական ոլժերի զարգացման համար: «Ոչ թէ հողի բացարձակ պտղաբերութիւնը, — ասում է Մաքսը, — այլ նրա շերտաւորումը, (դիֆերենցիրում) նրա բնական արդիւնք-

1) Ibid. t. II, p. 94.

2) Երկրագործութեան վրայ կլիմայի արած ազգացութեան մասին տպանական Բայցելը. „Die Erde und das Leben“ Leipzig und Wien, 1902 II Band s. s. 540—541.

3) Anthropogeographie, Stuttgart, 1882, hr. 29.

ների բազմապիսութիւնն է, որ կազմում է աշխատանքի հասարակական բաժանման բնական հիմքը, ստիպելով մարդուն, համաձայն նրա լրջապատող բնական պայմանների բազմապիսութեանը, բազմակազմանի գարձնել իր սեփական կարիքները, ընդունակութիւնները, արտադրութեան միջոցներն ու ձեերը¹⁾: Մարքորից յետոյ նոյնը համարեա խօսք առ խօսք կրկնում է Բատցելը. «Փլաւորը ոչ թէ նրանումն է, որ աւելի հեշտութեամբ նարէի ուտելիքը, այլ նրանում, որ առաջանան մարդու մէջ որոշ հակումներ, սովորութիւններ և վերշապէս, կարիքները»²⁾:

Այդպէս, աշխարհագրական միջավայրի լատկութիւնները պայմանաւորում են արտադրական ոլմերի զարդացումը, իսկ արտադրական ոլմերի զարդացումը պայմանաւորում է տնտեսական լարաբերութիւնները, որից յետոյ նոյնական միւս բոլոր հասարակական լարաբերութիւնները: Մարքոր այն պարզաբանում է հետևեալ խօսքերով. «Համաձայն արտադրական ոլմերի բնոյթի փոփոխում են արտադրողների հասարակական փոխադարձ լարաբերութիւնները, փոփոխում են նրանց գործակցութեան պայմաններն ու արտադրութեան ամբողջ ընթացքը: Պատերազմական նոր—հրաձիգ զենքի գիւտով անհրաժեշտօրէն պէտք է փոփոխութեան ենթարկել զօրքի ամրող ներքին կազմակերպութիւնը, ինչպէս և զօրքի կազմի մէջ մտնող բոլոր անձանց փոխադարձ լարաբերութիւնները, որոնց շնորհիւ և զօրքը ներկայացնում է իրենից օրպէս կազմակերպւած մի ամբողջութիւն.. վերշապէս փոփոխութեան պիտի ենթարկեին նոյնական ամբողջ բանակների փոխադարձ լարաբերութիւնները»³⁾:

Որպէսզի այդ պարզաբանութիւնը աւելի որոշ լինի, բերենք մի օրինակ: Մատղիները, որ ապրում են արևելեան

1) Des Kapital, I Band, III-Auflage, s. s. 524—526.

2) Völkerkund, I Band, Leipzig 1887, s. 56.

3) Նապոլէոն I ասում է. „La nature des armes décide de la composition des armées, des places de campagne, des marches, des positions, des ordres de bataille, du tracé et des profils des places fortes; ce que met une opposition constante entre le système de guerre des anciens et celui des modernes“. Précis des guerres de César, Paris 1836, pp. 87—88.

Ավրիկայում, սպանում են իրենց զերիներին, որովհետեւ,— ինչպէս առում է Բատցելը,— այդ հավական ցեղը զեւես տեխնիկան համարաւորութիւն չունի օգտագործելու նրանց հարկացրական աշխատանքը: Իսկ այդ հովիւներին հարաւոր և ան Վակամբէի երկրագոքները հնարաւորութիւն ունենալու այլ աշխատանքի միջոցներին թողնում են կենդանին, գար ձնելով նրանց իրենց գերիներին թողնում են կենդանին, գար ձնելով նրանց ստրուկները: Կնշանակէ ստրկութեան ծագման համար անհրաժեշտ է հասնել հասարական ոլմերի զարդացման օրոշ աստիճանի, երբ հնարաւոր է զառնում շահագործել գերիների աշխատանքը¹⁾: Բայց սարկութիւնը այնպիսի արտադրական լարաբերութիւն է, որի երեան գալով հասարակութիւնը, որը առաջ զիտէր միայն սեռերին և հասակին համապատասխան բաժանում, սկսում է բաժանել դասակարգերին երբ սարկութիւնը հասնում է կատարեալ զարդացման, այդ գէպքում նա դնում է իր կնիքը հասարակութեան ամբողջ տնտեսութեան վրայ, իսկ տնտեսութեան միջացով նաև միւս բոլոր հասարակական լարաբերութիւնների և ամենից առաջ քաղաքական կառուցւածքի վրայ ինչքան էլ որ իրենց քաղաքական կազմով տարբեր ըլիներն հին աշխարհի պետութիւնները, բայց և այնպէս նրանց զիտաւոր և ընդհանուր լատկութիւնը այն էր, որ իրաբանչիւրը նրանցից ներկայացնում էր իրենից քաղաքական մի կազմակերպութիւն, որ արտադրում էր ու պաշտպանում միմիայն աղատ մարդկանց շահերը:

1) Völkerkund, I 83. Պէտք է սակայն նկատել, որ պարզաբնակ առաջին աստիճանների վրայ գերիներն ատքով զայանամ է միմիայն նրանում, որ բնի կարպով ստիպում էին գերիներն աւատար թշաւութեարով մատնել յաղթողների և ասարակական կազմակերպութեամ մէջ: Այսուհետ արդէն ըստ կերպների յաւելաւ աշխատանքը օգտագործում, այլ կայ միայն ընդունութ չափ, որ առաջ է զալիս պահանջակացութիւնները: Բայց սորկութեան այս տիսակը յատով է արտադրական որոշ պետքի և արտադրութեան որոշ կազմակերպութեան:

VII.

Մենք գիտենք այժմ, որ արտադրական ոլմերի զարգացումը, որը վերջին հաշուով որոշում է հասարակական բոլոր յարաբերութիւնների զարգացումը, պայմանաւորում է աշխար հագրական միջավայրի չատկութիւններով: Բայց առաջ զալով տւեալ հասարակական յարաբերութիւնները իրենք մեծ ազդեցութիւն են դորձում արտադրական ոլմերի զարգացման վրայ: Այդպիսով այն, ինչ ոկրում հետեւանք էր, իր հերթին դառնում է պատճառ: արտադրական ոլմերի զարգացման և հասարակակարգի միջև առաջ է զալիս փոխազդեցութիւն, որ զանազան գարեջրաններում զանազան ձևեր է ընդունում:

Պէտք է լիշել նոյնպէս, որ եթէ արտադրական ոլմերի տւեալ գրութեամբ պայմանաւորում են տւեալ հասարակութեան մեջ գոյութիւն ունեցող ներքին յարաբերութիւնները, նոյնպէս և վերջինոյն գրութիւնից են կտիւած և նրա արտաքին յարաբերութիւնները: Արտադրական ոլմերի զարգացման իւրաքանչիւր տւեալ աստիճանին համապատասխանում է որոշ բնոլմի զինումն, զինուորական արւեստ և վերջապէս միջազդային (աւելի ճիշտ — միջնասարակական ալիքներն, ի միջի ալլոց, նաև միջեզային) իրաւունքը: Որսորդական ցեղերը չեն կարող օտեղմել խոշոր քաղաքական կազմակերպութիւններ հենց այն պատճառով, որ նրանց արտադրական ոլմերի զարգացման սոորին աստիճանի վրայ դժուելը ստիպում է նրանց փոքրիկ հասարակական խմբակներով զանազան կողմեր ցրւել գոյութեան միջոցներ հայթաթելու համար: Եւ ինչքան աւելի են լինում այդ հասարակական խմբակների ցրումը, նոյնքան աւելի անխուսափելի են դառնում աւելի կամ պահան արիւնալից կորիւները՝ վեռելու նոյնիսկ այնպիսի վեներ, որոնք քաղաքակերթած հասարակութեան մեջ հեշտութեամբ կարելի է վեռել նոյնիսկ հաշտարար դառնում: Ելքն ասում է, որ երբ մի քանի առարարիական

ցեղեր համախմբւում են մի տեղ որոշ նպատակների համար, այդպիսի համախմբութերը երբեք երկարատև չեն լինում. գեռ առաջ, նախ քան ուստելիքի պահասը կամ որսին ենտեւելու անհրաժեշտութիւնը կստիպէ աւստրալիացիներին բաժանել, նրանց մէջ սկսւում են թշնամական արարաձանութիւններ, որոնք, ինչպէս յայտնի է, շուտով փոխւում են արիւնալից ընդհարութերի¹⁾:

Իւրաքանչիւր գք հասկանում է, որ նման ընդհարութեներ կարող են առաջանալ բազմապիսի պատճառներից: Բայց նկատելի է, որ ճանապարհորդների մեծ մասը այդ ընդհարութեները բացադրում են տնտեսական պատճառներով: Երբ մի անգամ Ստենկիլը հարցրեց Աֆրիկայի հասարակածային մի քանի բնակիչների, թէ ինչպէս են առաջ գալիս պատերազմներ նրանց ու հարևան ցեղերի միջև, նրան պատասխանեցին: «Մեր տղերը գնում են որսի. հարեւանները դուրս են քշում նրանց. այն ժամանակ մենք յարձակում ենք հարեւանների վրայ, նրանք մեզ վրայ, և մենք կռւում ենք» այնքան, մինչև որ զգւում ենք կամ կողմերից մէկն ու մէկը յաղթւում էն²⁾: Նոյն քանը ասում է Բերտոնը: «Աֆրիկայում բոլոր պատերազմները առաջ են զալիս երկու պատճառով, — երբ յափշտակում են անասուններ կամ երբ զերի են վերցնում մարդկանց»³⁾: Տատցելը հնարպւոր է համարում, որ նոր Զելֆնդիայում պատերազմներ տեղական ցեղերի միջև յանախ առաջ են դարձկազին միտ ուտելու նրանց ցանկութիւնից⁴⁾: Բայց տեղացիների հակումը գետի մարգակերութիւն ինքն ըստ ինքեան բացադրում է տեղի կենզանական աշխարհի աղքատութեամբ:

Անեն մարդ զիտէ, թէ որքան մեծ կախում ունի պատճառմի ելքը կռւող կողմերից իւրաքանչիւրի զինումից: Իսկ նրանց զինաւորութն արգէն որոշում է նրանց արտադրա-

¹⁾ Ed. Eure. Manners and Customs of the nes of the Australia, London 1847 p. 243.

²⁾ Dans les tenebres, de Afrique, Paris 1890. T. II p. 91.

³⁾ Burton, Voyage auf grands de l'Afrique oriental, Paris, 1862. I. 666.

⁴⁾ Ibid. S. 93.

կան ոյժերի կացութեամբ, նրանց տնտեսութեամբ և տնտեսութեան վրայ հիմնած նրանց հասարակական լարաբերութիւններով¹⁾:

Սոսել, թէ այս ինչ ժազովաւրդները կամ ցեղերը ա ի բա-
պետւեցին ուրիշ ժազովուրդներից, գեռ չէ նշանակում
բացադրել թէ ինչու նրանց տիրապետութեան սօցիալական
հետեանքները եղան հէնց այսպիսին և ոչ թէ այնպիսին:
Երբ Հռոմէացիները գրաւեցին Գաղիան, չստացւեցին այն
սօցիալական հետեանքները, որոնք ստացւեցին յետագալում,
երբ նոյն երկիրը գրաւեցին գերմանացիները: Նորմանների
տիրապետումով սօցիալական հետեանքներն Անգլիայում այն
չէին, ինչ որ առաջ եկան Ռուսաստանում մոնղոլների տիրա-
պետութեան օրուի: Այս բոլոր դէպքերում տարբերութիւնը
պայմանաւորւած է տիրապետող և տիրապետան ենթար-
կւող ժողովաւրդների անտեսակարգի տարբերութեամբ:
Ինչքան աւելի են զարգանում տւեալ ժողովաւրդի կամ ցեղի
արաւագրական ոյժերը, այնքան աւելի մեծանում է գոյու-
թեան կուի համար աւելի լաւ զինւելու հնարաւորու-
թիւնը:

Սակայն այս ընդհանուր կանոնից գուրս կան նկատելու արժանի բայցառութիւններ։ Արտագրական ոլժերի դարդացման ստորին շրջաններում տնտեսական զարգացման րոլը բովին աարեք աստիճանների վրայ գտնւող ցեղերի (օրինակ, թափառական հովիւնների և նստակետոց երկրագործների) դինաւորման մէջ անքան խոշոր տարրերութիւն չի կա-

¹⁾ Եղ բանը ւա բացարձում է Բագելսը Աստի-Գիբինսիք այս վալինիկուու, զոտս կ նեփած են „Թուութեան թէօրիայի“ վերլուծութեանը: Նայիր նոյնպէս համեմատ պիրը: „La maîtres de la guerre“ par le lieutenant-colonel Rousset, professeur à l'école supérieure de la guerre, Paris 1901: Այս գրքի աղջինակը խօսելով գեներալ ռամադի նայեացրների մասին ասուի է՝ „Միարարանչիք տեսաւ պատճեակն պարեցրանի սօցիալական կացութեանը պիրականոց աղքացութեան ուսի ազգութեան ու մքան վեհուրական կազմակերպութեան վրայ. այլ և պիտուրականների ընտառութեան. Ընդունակութիւնների եւ ծգանունների վրայ. Սովորական գիշեալժերը օգուտում ան սովորական մեթոդներով, զոր են զոտս սովորական միջոցները եւ այդպահու յաղթուուն են կամ յաղթում, նայած հանգանակութեանը... Խոկ մեծ զօրականինաստաբները թիւնց անժարին են նեխարաւում կույտ միջոցներն ու ծեւերը“ (Եր. 2: Խեցւու. կա առնենից հատարքին է: Պարզու

բաղ լինել, որքան դա լինում է յետագալում: Բացի դրանից, տնաեսական կեանքի զարգացումը, որը խոշոր չափերով ներգործում է տւեալ ժողովուրդի բնաւորութեան վրայ, երբեմն այն աստիճան թուլացնում է նրա մարտականութիւնը, որ նա այլևս անկարող է լինում դիմադրել տնտեսական կեանքով աւելի յետ ընկած, բայց պատերազմների սովոր թշնամուն: Ահա թէ ինչու խաղաղ երկրագործական ցեղերը յանախ ենթարկւում են մարտական ժողովուրդների տիրապետութեանը: Ռատցելը նկատում է, որ ամենահիմնաւոր պետական կազմակերպութիւններ առաջ են դալիս «կիսակիրթ ժողովուրդների» մօտ, երբ աիրապետութեան շնորհիւ միանում են այդ երկու էլեմենտները՝ երկրագործութիւնն ու խաշնարածութիւնը: Ըսդհանուր առաջամբ ինչքան էլ նիշտ ըլինի այդ նկատաղութիւնը, սակայն պէտք է լիշել, որ նոյնիսկ ալդպիսի դէպքերում, (լաւ օրինակ է Զինաստանը) տնաեսապէս յետ ընկած տիրապետութիւնները կամաց կամաց ենթարկւում են անտեսապէս աւելի զարգացած տիրապետած ժողովուրդի ազգեցութեանը:

Աշխարհագրական միջավայրը մեծ աղղեցութիւն ունի ոչ միայն նախնական ցեղերի վրայ, այլ և արագէս կոչւած քաղաքակիրթ ժաղովուրդների վրայ. «Բնութեան որոշ ոյժը մեծ չափերով շահազործելու նպատակով նրա վրայ հասարակական հսկողութիւն նշանակելու և այդ ոյժը մարդկացին կազմակերպւած շանքերի միջոցով մտրդուն ենթար-

է, որ նրանը «առաջնորդելով մի բնշ որ նախադային նախատեսումնվ, ձևակերպում են կուի միջոցներն ու ծեւերը, նախապատճառն սօֆիալական էլեկտրիֆիայի գույքանը օրէնքների, որոնց վօնական ազգացութիւնը զննորական արևստի տեխնիկայի վրայ կարողանում են զնաւառել միայն նրանք» (Նոյն սեւեր): Կնշանակէ մոտմէ միայն զանել «սօֆիալական էլեկտրիֆիայի» և նաառակերտեան տնտեսական զարգացման պատճառական կառաջ զննորական զործի աւելի անսպասիլի յաջողութիւնների մատօքրաւիրական արցադրութիւնը տալու նախաք: Խնդը Ռուսան նեռու չէ այդ բացադրութիւննից: Նորազոյն զննարենատի նրա պատճական ուսումնասիրութիւնը, որ արած է զններալ Թաննալի ընդուռակած աշխատութիւններց օգտվելով, շատ նիւն է այն ցուցմունքներն, որ անոմէ է Խոգէւսը: Տեղեր կան, որ այդ նմանութիւնը մօտենութ է կատարեալ նշութիւն:

կեղու անհրաժեշտութիւնը, — ասում է Մարքսը, — կատարում է ամենավճռական գերը արդիւնաբերութեան պատմութեան մէջ: Այդպիսի նշանակութիւն ունէր զրերի հոսման կանոնաւորումը Եգիպտոսում, Լամբարդիայում, Հոլանդիայում, Պարսկաստանում և Հնդկաստանում, ուր արհեստական ջրանցքների միջոցավ հողի ոռոգաւմը տալիս էր հողին ոչ միայն ջուր, այլ և տիղմ ու լեռներից հանքային պարաբացումն: Արարների ժամանակ Իսպանիայում և Սիցիլիայում արդիւնաբերութեան ժաղկման դադունիքը կայանում է ջրանցքների զարգացման մէջ¹⁾:

¹⁾ Das Kapital, ibid., s.s. 524—526.

2) սայեր Նրա History of civilization in England, vol. 1, Leipzig, 1865
թ. 36-37, Հայ Յօնի, տողական պատկերներու բնակչութեան վրա ազդու չորս համական
պահանջներից մէն եւ Երեք ընհանուր տեսքն է (the general Aspect of Na-
ture—общий вид страны), որը ազդու է գիտարարար երևակայութեան վրա,
իսկ խիստ զարգացած երևակայութեան առաջանուն է սոստիհակաց պոլիտիկին,
որը իր ներթիւն դադարացնում է գիտութիւնների զարգացումը: Յաժմանիկ երկա-
շարժները Պատուա, ազգային տեսակիների երևակայութեան վրա, ունեցան իրենց
ազդեցութիւնը նաև աւտական կազմի վրա: Եթէ հապանացին ու իստացին,
սահման են, ոս Երեխն առաջ է զարդ երկարացներից ու ժարեխներից արտա-
վիժուալներից (այս տեղը, եր. 112—113): Եյլ անմիջական նոգերանական ազդե-
ցութիւնը յատիկակէն ուժով է կուլուուրական զարգացման առաջն ըշմաներուն:
Սակայն ժամանակակից գիտութիւնը ապացուցուն է ընդականուած—որ զարդ-
աւի կորպուս նման նն տնտեսական զարգացման մատական ատտեմպտի վրա
գտնուու նախնական ցնցին կրօնական անտառականութեանը: Եօնի նախագրքը, որ նա
մարգրած է 18-րդ դարի գրողներից, արտացայտն էր ոնք Հիմնականուց (անցից Des
Aires, des laut et des lieux, traduction de Coray 1800, սարագր. 76, 85, 86, 88
եւ այլն:

գալիս տւեալ տեղում և տւեալ արտադրական
ոլժերի հիման վրայ, որոնց զարգացման առաջին
պայմանը — այդ միջավայրի լատեկութիւններն են։
Փամանակակից ցեղագրութիւնը (Էտնոլոգիան) աւելի ու աւելի
լի յանդում է այդ տեսակետին։ Եւ զբան համապատասխան
այդ գիտութիւնը «կուլտուրայի» պատմութեան մէջ տւելի
և աւելի քիչ տեղ է տալիս (ոռասալին)։ «Կուլտուրական
որոշ տւեալներ ձեռք բերելը ոչ մի կապ չունի ցեղի հետ»
— ասում է Բաացելը¹⁾։

Բայց արդէն ձեռք բերւած տւեալ «կուլտուրական» կացութիւնը անկասկած ազգում է «ռասալի» Փիդիքական և հոգեկան լատկութիւնների վրալ²⁾:

Աշխարհագրական միջավայրի աղբեցութիւնը հասարակական մարդու վրայ փռփռի ականքան մեծութիւնն է: Այդ միջավայրի լատկութիւններով պայմանաւորւած արտագրական ոլժերի զարգացումը մեծացնում է մարդու իշխանութիւնը բնութեան վրայ և դրանով զնում նրան նոր լարարերութեան մէջ դէպի նրան շրջապատող աշխարհագրական միջավայրը: Ժամանակակից անգլիացիները վերաբերում են դէպի ոչ միջավայրը ոչ այնպէս, ինչպէս վերաբերում էին դէպի նոյն միջավայրը Յուլիս Կեսարի ժամանակ Անգլիայում ընակւող ցեղերը: Դրանով արգեն վերացում է ամեն մի առարկութիւն այն բանի դէմ, որ տւեալ տեղի աղբարնակութեան բնաւորաթիւնը կարող է հապես փոխւել, չնայած որ նրա աշխարհագրական լատկութիւնները նում են անփոփոխ:

¹⁾ Volker kund, 1, S. 10 Պահ Միլը, կունենաց մը ժամանակի շշնչութ մասնաւորութիւնը մէկ խօսքը, առաջ է. «of all vulgar modes of escaping from the consideration* of the effect of social, and moral influences of the human mind, the most vulgar is that* of attributing the diversities of conduct and character to inherent natural differences». Principles of political Economy, Vol. 1, p. 390.

²⁾ Ենդերի մասին նայիր Յ. Փիլոսի Ենթարքի աշխատութեանը. •Le préjugé des races, Paris, 1905.

VIII.

Ըսեալ տնտեսական ստրուկտուրայի առաջացրած իրաւական և քաղաքական յարաբերութիւնները¹⁾ վճռական ազգեցութիւն են ունենում հասարակական մարդու հոգեբանութեան վրայ. Մարքսն ասում է. «Հասարակականութեան զանազան ձևերի, գոյութեան հասարակական պայմանների վրայ բարձրանում է զանազան իւրայատուկ զգացմունքների և մտահայեցողութիւնների, հայեցքների և հասկցողութիւնների մի ամբողջ վերնաշենք»: Կացութիւնը որոշում է մտածողութիւնը: Եւ կարելի է ասել, որ պատճական զարգացման պրօցեսի մէջ գիտութեան արած իւրաքանչիւր նոր քայլը մի նոր փաստ է յօդուտ նորագոյն մատերիալիզմի այդ հիմնական խնդրի:

Դեռ ևս 1877 թ. Լիւդվիգ Նուարէն գրում էր. «Լեզուն և բանականութիւնը առաջ եկան մեր նախնիքների ընդհանուր նպատակի համնելուն ուղղված միահամուռ գործունէութիւնից»²⁾: Այսուհետեւ զարգացնելով իր այդ նշանաւոր միտքը, Լ. Նուարէն ցոյց է տալիս, որ սկզբում լեզուի միջոցով արտաքին աշխարհի առարկաները անւանում էին «Ճէ որպէս որոշ կերպար ան քունի, ու առարկաներ, այլ որպէս այդպիսի կերպարանը ստացած առարկաներ (nicht als gestalten, sondern als gestaltete), ոչ Ճէ որպէս որոշ զորժութիւն կատարած ներգործական առարկաներ, այլ որպէս որոշ»

1) Տատկութեան ազգեցութիւնը հասարակական յարաբերութիւնների վրայ նարդի մասն նայի լուգլուք. „Der Ursprung der Familie, des Privateigentums und des Staats“, achte Auflage, Stutsgard 1900 և չիւլյանուի „Recht und Sitte auf verschiedenen Kulturstufen“, 1-er Th. iena 1869. Դժբախտաբար չիւլյանու վայ և հանգստական մտակալիքը: Տ. Ալելյանը եր նուարութիւր որոշում—„Rechtsentstehung und Rechtsgeschichte“, Leipzig, 1904,—ընթիր իրաւուքը, որպէս հասարակական կենսի արագացման առնիւր, չի նորացնում նարդը մենչեւ այնուհետ, թէ ի՞նչով է պայմանաւորում այդ վերընի զարգացումը: Մ. Ա. Ալկարսի „Les bases sociologiques du droit de l'Etat, Paris, 1898“ գրում կան մի շաբաթ առանձին նկատողութիւններ, որոնք են սփոռութիւններ առարկայի մեջ բանի կողմանի վրայ. բայց ընդհանրապէս պիկարդի համար նարդը այնպահ է պարզած չէ:

2) Der Ursprung der Sprache, Meinz, p. 331.

զորժութեան ենթարկւող կրաւորական առարկաներ¹⁾: Եւ նա այդ բանը՝ պարզաբանում է այն իրաւացի գատողութեամբ, որ «բոլոր առարկաները մարդու տեսրդութեան շրջագծի մէջ են մտնում, այսինքն դառնում են նրա համար իրեր, միմիայն այն չափով, ինչ չափով նրանք ենթարկւում են նրա ներգործմանը, ստանալով գրան համապատասխան նշանացոյց, ալսինքն անուննը²⁾: Կարծ ասած, Նուարէի կարծիքով, լեզուի սկզբնական արմատներին բովանդակութիւն է տալիս մարդկային գորժութիւններնը³⁾: Հետաքրքիրն այն է, որ Նուարէն իր թէօրիայի առաջին սաղմք գտնում է Ֆէկրբախի այն մտքի մէջ, որ մարդու էութիւնը կայանում է հասարակականութեան, մարդկանց միամիտով ամբողջութեան մէջ: Մարքսի մասին նա, ինչպէս երևում է, ոչինչ չգիտէր, որովհետեւ Մարքսին ճանաչելու դէպքում նա կտեսնէր, որ իր տեսակէտը լեզուի առաջացման համար կորժուն է ու թեան կատարած գերի մասին աւելի մօտ է Մարքսին, որը իր իմացարտնութեան մէջ (հետօնութեան), հակառակ մեծաւ մասամբ (մտահայեցողութեան) մասին խօսող Ֆէկրբախի, ընդդմում է մարդկային գործունէութիւնը:

Հաղիւ թէ կարիք լինի Նուարէի թէօրիայի առթիւլիշել, որ մարդկանց գործունէութեան բնոյմը արտադրութեան պրօցեսի մէջ որոշում է նրանց արտադրական ոչմերի կացութեամբ: Դա շատ պարզ է: Աւելի օդտակար կինէր լիշել, որ կացութեան վճռական ազգեցութիւնը մտածողութբանը վրայ յատկապէս պարզ նկատելի է նախնական ցեղերի վերաբերեալ, որոնց հասարակական և մտառորդական կեանքը անհամեմատ աւելի պարզ է, քան քաղաքակարթւած ժողովուրդների կեանքը: Ֆօն-Դիեն-Շտէյնենքը կենտրոնական Բրազիլիայի ընիկ տղաբնակութեան մասին գրելիս ասում է, որ մէնք կհասկանանք նրանց միայն այն ժամանակական առաջարկայի մեջ բանի կողմանակութեանը, որոնք այսպահ առաջարկայի մեջ բանի կողմանակութեանը:

1) ibid. S. 341.

2) S. 347.

3) ibid. S. 369.

մանակ, երբ դիտենք նրանց որպէս որսորդական կենցագի ստեղծւածքներ (Erzeugniss): «Նրանց փորձառութեան ամենապլիսաւոր աղբիւրը կենդանիներն են, — շարունակում է նա — և այդ փորձառութեան օրնութեամբ զրլիաւրապէս նրանք բացադրում են բնութիւնը, կազմում են իրենց աշխարհական կենցաղի պահմանները որոշում են այդ ցեղերի ոչ միայն աշխարհականցը, այլ և նրանց բարուական հաօկացողութիւնները, նրանց զգացմունքները և նոյնիսկ, ինչպէս նկատում է նոյն հեղինակը, գեղարւեստական ճաշակը: Բոլորովին նոյն բանը մենք տեսնում ենք հոգւակ ան ցեղերի մօտ: Այդ ցեղերից միակողմանի անասն ապահների (ինչպէս անւանում է նրանց Բացելը) խօսակցութեան 99 տոկոսը անասունի, նրա ժագման, սովորութիւնների, առաւելութիւնների ու պահառութիւնների մասին է²⁾: Այլպիսի «միակողմանի անասնապահներ» էին, օրինակի համար, զժբախտ և երրերօները, որոնց ոչ վաղուց այնպիսի գաղանակին վալրագութեամբ ազպեցին» և բաղաքակիրթ» գերմանացիք³⁾:

Եթէ նախնական սրսորդի փորձառութեան ամենապլիսաւոր աղբիւրը կենդանիներն են, և եթէ նրա ամբողջ աշխարհականցը կառուցւում էր այդ փորձառութեան վրայ, դրա համար էլ դարձանալի չէ, որ հովական ցեղերի ամբողջ առասպեկտանութիւնը (միֆոլոգիա) (որ զարդացման այդ աստիճանի վրայ փոխարինում է և փիլիսոփա-

¹⁾ Unter den Natur-Völkern Zentral-Brasiliens, Berlin 1895, S. 201.

²⁾ ibid, s. s. 205—206.

³⁾ «Մանուկանին նուիսկը» մասն նայիր Փրիտչի յանուանս գրան ուրիսած «Eingeborene Sud-Afrikas, Breslau, 1872» պերը. Փթիթչն ասու է. «Բաժրի եղանակ, այս սոսրիան, որի մասին նա երազում է և որմն նա պիտի գուարապես է իր երգիւմ մէ», — ուր այս անասնն է, այսիւրն ուր անենարժուարական նուեցած երգիւմ ենքներին նետիւում են ցեղասպինի պատմին նորիւած երգիւմ, ոգոնց մէջ նրա անասնը նոյնպէս նույն է կառուարում» (1. 50). «Անասպատակ զբաղմունքը բաժինի մաս նուսարում է անասններին նուամելը» (1. 85). Նոյնիսկ պատերազմը սիր և զալիս բաժինն ուրիսարապէս այն պատճառով, որ պատրազմի շորոնի նա կարող է, որուս աւար, ծնոր թիրի անսանն (1. 79): Բաժինի միջն թշնամութիւնն առաջ է առին անասնին պատճառով ընդարձեւոց (1. 322.): Նոյն Փրիտչն ունի որպէս — ուղղված նույնի կենցաղի մասին շատ նուարերի նկարազարդիւն (1. 424 և առուն):

յութեանը, և՝ աստւածաբանութեանը, և՝ զիտութեանը) ստանում է իր բովանդակութիւնը նոյն աղբիւրից: «Ի՞նչն է, որ բնորոշում է բուշմէնների առասպելները, — ասում է կնդրի Լէսզը». Դա այն բացառիկ դերն է, որ խաղում են նրանց առասպելների մէջ կենդանիները: Բայց մի պատեից, որ երեան է գալիս այստեղ ու այնտեղ նրանց անկապ լեզենդաների մէջ, այդ առասպելների մէջ հաղիւթէ երբ և իցէ երեան է գալիս մարդը»¹⁾: Բր. Սմիտի ասելով, աւտարալիացիների (բուշմէնների նման գեռ դուրս չեկած որո՛ր դական կենցաղից) աստւածները մեծ մասամբ թռչուններ ու կենդանիներ են²⁾:

Նախնական ցեղերի կրօնը առալժմ բաւարար չափով լւա ուսութեանսիրւած չէ: Բայց այն, ինչ որ մենք զիտենք կրօնի մասին, անկասկած հաստատում է Ֆէկբրախի-Մարքու կրօնի մասին, անկասկած համարակարգութիւնը կրօնը»: Իգ. Թէ կրօնն է ստեղծում մարդուն, այլ մարդն է ստեղծում կրօնը»: Իգ. Թէ ծում մարդուն, ասում է ստեղծում կրօնը»: Իգ. Պարզ է, որ բոլոր ժողովուրդների համար ուրիշ ասում է. «Պարզ է, որ բոլոր ժողովուրդների համար ասուածութեան տիպար ծառայել է մարդք. Դրա շնորհիւ մարդկացին հասարակահարզը և նրա կառավարութիւնը օրինակ են դառնում, որի համապատասխան ստեղծում է երկնային հասարակութիւն և երկնային կառավարութիւն»³⁾: Դա արգեն — անկասկած կրօնի բացադրութեան մատերիալիստական հայցակիւտ է. յայտնի է, որ դեռ Սէսմաննը հակառակ կարծիք ուներ, բացադրելով հին լոյների հասարակական և բաղաքական կողմք նրանց կրօնական հա-

¹⁾ Muthes cultes et religion. Trad. par D. Charillet, Paris 1896, p. 332.

²⁾ Այսուղ ավելոր է յիշուակալը թիւ: Աղբէր այն նկատողութիւնը, որ մարդու մեջութիւնը կրեւակայում է նմանամիների կրպարանուն: «Եթէ յանազարդ մարդու մարդունիւնը կրպարանուն (անտրոպոմորֆիզամ), ուստի մարդու մարդունիւնը կրպարանունը մարդունիւնը» (Ethnographische parallele und Vergleiche, Neue Հարցեր և կանգամներ, Folge, Leinzig, 1889, S. 116): Կենամանիների մարդունիւնունը հնիտագրում է արգելու պատուական ուժութիւնը զարգացմանը համանարար անելի բարձր ասրաց արգելու պատուական ուժութիւնը (Die Weltanschauung der Naturvölker, Weimar 1898, S. 24).

³⁾ La civilisation primitive, Paris, 1876, tome II, p. 322.

ւատալիքներով։ Բայց աւելի կարեսըն այն է, որ գիտութիւնն արդէն ոկտում է երևան հանել այն պատճառական կապը, որ գոյութիւն ունի նախնական ժողովուրդների տեխնիկակի զարդացման ու նբանց աշխարհականեցողութեան միջն¹⁾։ Այդ տեսակէտից երևի գիտութիւնը անելու է հարուստ գիւտեր

Նախնական հասարակութեան իդէոլոգիայից ամենից լաւ ուսումնաժրւած է այժմ զեղարւեատը։ Այդ նիւղի վերաբերեալ հաւաքւած են ամենահարուստ նիւթեր, որոնք երկմասնի չինելով հանդերձ ամենահամոզեցուցիչ կերպով ցոյց են տալիս, որ պատմութեան ժատերիալիստական բացադրութիւնն ուղիղ է և, այսպէս առած, անխուսափելի։ Այդ նիւթը այնքան մեծ է, որ մենք այստեղ կարող ենք թւել հարցին վերաբերող գրւածքներից միայն զիխալոններ։ Schweinfurth, Artes Africanae, Leipzig 1875. R. Andre Ethnografische parallele. յօդած. Das Zeichnen bei den Naturvölkern. Unter den Naturvölkern Zentral-Brasiliens, Berlin 1894. G. Mallery-Picture writing of the american Indians An. Rep. of the Bureau of Ethnology, Washington 1893. Hoernes-Urgeschichte der bildenden Kunst in Europa, Wien, 1898. Ernst Grossé-Die Anfänge der Kunst. E. Grossé-Kunstvissenschaftliche Studien, Tübingen 1900. Vrjö Hirn—Der Ursprung der Kunst, Leinzig 1904. Karl Bücher-Arbeit und Rhythmus, dr. Aufl. 1902. Gabriel et Adr. De Mortillet—Le préhistorique, Paris, 1900, p. p. 217—230. Hoernes-Der diluviale mensch in Europa, Braunschweig 1903. Sophus Müllir-l'Europe préhistorique, trad. du danois par Em. Philipot, Paris 1907. Rich. Wallaschek—Anfänge der Tonkunst, Leipzg, 1903.

Թէ ինչ եղածացութիւնների է յանդել ժամանակակից գիտութիւնը զեղարւեատի ծագման վերաբերեալ, ցոյց կտան մեր թւած հեղինակների հետևեալ որոշութերը։ Դեսբնեսն առում է²⁾։ «Օրնամենտիկան կարող է զարդանալ արդիւնաբերական գործունեութիւնից, որը ներկայացնում է իրենից նրա նիւթական նախապայմանը. այն ժողովուրդները, որոնք չգիտեն արդիւնաբերութիւնը, չգիտեն նոյնպէս օրնամենտի-

¹⁾ Համ. 9 Շուացի. Vorgeschichte der Kultur, Leipzig und Wien 1900, S. S. 559—564, նկրածութիւնը ուրիշ բանի տեմի ոն կերպարանանը նոյն հարցին.

²⁾ Urgeschichte etc., S. 38.

կան»։ Ֆօն-Դեն Շտեյնը ասում է, որ նկարչութիւնը (Zeichnen) զարգացաւ գործնական նպատակներով առաջ կան եր գծելով (Zeichnen). Բիւխերը եկել է այն եղրակացութեան, որ «զարգացման նախնական տառինի վրայ աշխատանքը, երաժշութիւնն ու պօեզիան ձուլում են ի մի, ուսկայն այդ երրորդութեան հիմնական էլեմենտը աշխատանքն է, մինչդեռ երաժշտութիւնն ու գուղիան ունին միայն երկրարդական նշանակութիւն»։ Նրա կարծիքով «պօեզիայի ծագումը պէտք է փնտոել աշխատանքի մէջ»։ Նա նկատում է, որ ոչ մի լիզու չունի այնպիսի բառեր, որոնցից կարելի լինէր չափական կարգով նախադասութիւններ կազմել Դրա համար անհաւանական է, որ մարդիկ չափական բանաստեղծական ոն ստեղծեին իրենց ամենօրեալ լիզուն գործածելու շնորհիւ. դրան կրհակասէր լիզուի ներքին տրամաբանութիւնը։ Բայց ինչպէս բացադրել չափածու, ու իտմական ոնի ծագումը։ Բիւխերը ենթադրում է, որ մարմին չտփւած, ու իտմական շարժութերը մտցրել են իրենց զուղացման (сочетание) օրէնքները բանաստեղծական գեղեցիկ ոնի մէջ։ Դա աւելի քան հաւանական է, որովհետև զարգացման ստորին աստիճանների վրայ այդ ու իտմական շարժումները սովորաբար կատարւում են երգի հետ միաժամանակ։ Բայց ինչո՞վ է բացադրում մարմին շարժումների զուղացումը։ Արտադրական պրոցեսսի բնույթութեան մէջ։ Այդպիսով բանաստեղծութեան գործառնիքը գտնւում է արտադրական գործունելիթեան մէջ

Բ. Վալլաշեկը այսպէս է ձևակերպում նախնական ցեղերի բեմական ներկայացումների վերաբերեալ իր տեսակէտը²⁾։

«Այդ ներկայացութերի նիւթերն են».

«1) Որորդութիւն, պատերազմ, թիավարութիւն, (որ) սորդների համար—կենդանիների կետնքն ու սովորութիւնների նիւթեան մէջ»։

¹⁾ Ցիւած աշխատութիւնը, պր. 342 ու հետեւեալը:

²⁾ Ցիւած աշխատութիւնը, էջ 257.

ները. կենդանական մնջխաղութիւն (պանտոմիմա), զիմակներ¹⁾:
ա2) Անառունների կեանքն ու սովորութիւնները (հով-
տական ժողովուրդների մօտ).

ա3) Աշխատանք (երկրագործների մօտ—ցանքս, կալսելք,
խաղաղենու խնամք).

Աներկալացմանը մասնակցում է ամբողջ ցեղը, որը միա-
ժամանակ երգում է (խմբական): Երգւում էին անիմաստ բա-
ռեր, որոնց որոշ բովանդակութիւն տալիս է մնջխաղութիւնը
(պահնտոմիմա): Պատկերացւում են առօրեալ կետնքի միայն
այն գործողութիւնները, որոնք բացարձակ կերպով անհրա-
ժեշտ են զոյսւթեան կուրի համար»: Վաղաշեկն ասում է,
որ շատ նախնական ցեղերի մօտ այդպիսի ներկալացուների
ժամանակ երգողների խումբը երբեմն բաժանեում է երկու:
իրար դէմ հանդիման կանգնած մասերի: «Այդպիս էր, աւե-
լացնում է նա,—լուսական սկզբնական զրաման, որը սկզբում
նոյնպէս կենդանական պահումիմա էր: Յոյների անտեսական
կեանքի մէջ ամենամեծ դեր կատարող կենդանին ալմն էր
(արագեղիա բառը առաջ է եկել tragos բառից, որ նշանա-
կում է այժ)»:

Դժւար է մտածել աւելի պարզ օրինակ այն բանի, որ
ոչ թէ մտածողութիւնն է որոշում կացութիւնք, այլ կա-
ցութիւնը՝ մտածողութիւնը:

IX.

Սակայն անտեսական կեանքը զարգանում է արտադրա-
կան ոլֆերի ամճան ազդեցութեան տակ: Դրա համար էլ ար-
տադրութեան պրոցէսսի մէջ փոփոխում են մարդկանց փո-
խադրձ լարաբերութիւնները, իսկ որա հետ նաև մարդկա-
յին հոգեբանութիւնը: Մարքսն ասում է. սիրենց դարձաց-
ման որոշ աստիճանի վրայ հասարակութեան արտադրա-
կան ոլֆերը ներհակում են այդ հասարակութեան ար-
տադրական լարաբերութիւններին, կամ նոյնը արտադրական

իրաւաբանական լեզուվ, ունեցւածութիւննե-
րին, որոնց ծոցում մինչ այդ նոյն արտադրական ոլֆերը
զարգանում էին: Այդ լարաբերութիւնները, որ նպաստում
էին արտադրական ոլֆերի զարգացմանը, սկզբում են արգելք
հանդիսանալ նրանց լետագայ զարգացումին: Այն ժամանակ
վրայ է հասնում սօցիալական լեզափոխութեան դարեշրջանը:
Տնտեսական հիմունքի փոփոխումով ավել կամ պակաս արա-
գութեամբ փոփոխում է այդ հիմքի վրայ կառուցւած հրս-
կայական վերնաշենքը: Ոչ մի հասարակական ձեւ չի անհե-
տանում աւելի նուազ, քանի զեռ խոշոր չափերով չեն զար-
գացել արտադրական ոլֆերը, որոնց ծաւալման համար հասա-
րակական այդ ձեւը ունի բաւականաչափ ազատ ասպարեզ: Նոր,
աւելի բարձր արտադրական լարաբերութիւնները չեն բանում
նին լարաբերութիւնների տեղը աւելի նուազ, քանի զեռ հին
հասարակութեան ծոցում մշակւած չեն նրանց զոյսւթեան
նիւթական պայմանները¹⁾: Դրա համար էլ կարելի է ասեր
որ մարդկութիւնը միշտ էլ առաջադրում է իրեն իրազոր-
ծելի նպատակներ, որովհետեւ ուշադիր նախելու դէպքում
միշտ էլ պարզում է, որ աւել նպատակը երեան է զալիս
միայն այնտեղ, ուր նրա իրագործման նիւթական պայման-
ները արդէն գոյսւթիւն ունին. կամ գտնուում են իրենց
ժագման պրոցէսսի մէջ»:

Այստեղ մենք աեսնում ենք հասարակական զարգացման
խօսկան և միենոյն ժամանակ զուտ մատերիալիստա-
կան ռհանրահաշիւրը: Այդ հանրահաշիւրի մէջ տեղ ունին ինչ-
պէս «թռիչքները» (սօցիալական լեզափոխութիւննե-
րի դարեշրջաններ), նոյնպէս և աստիճանական փոփո-
խութիւնները: Իրերի աւելալ կացութեան լատկութիւն-
ների աստիճանական քանակական փոփոխութիւնները վերջ-
ի վերջու լանգում են՝ որ ակի փոփոխութեան, այսինքն
ընկնում է արտադրութեան հին եղանակը (կամ
ինչպէս Մարքսն է արտադրում—ընկնում է հասարակա-

¹⁾ Ցայտունի է, որ մեզ մատ 1905 թ. աշնանի մի բանի մարթնանիք աղ-
պէս չեն դատում...

¹⁾ Որոնք արտայայտում են սովորաբար սովորական կենդանենիւ, դ. ոյ.

կան հին ձեր) և նրան փոխարինում է մի նորը: **Մարքսի** ասելով, արևելեան անտիկ ֆեոդալական (աւատական) և բուրժուական արտադրական ձեւերը ընդհանուր գծերով կարող են դիմուել որպէս հասարակութեան անտեսութեան զարգացման յաջորդական («յառաջադիմական») դարեշրջաններ: Բայց պէտք է կարծել, որ երբ Մարքսը յետագալում ծանօթացաւ Մօրդանի գրքի հետ նախնական հասարակութեան մասին, այն ժամանակ նա հաւանակտնաբար փոխեց իր անուանեալ անտիկ արտադրութեան և արևելեան արտադրութեան ձեւերի միջև եղած յարաբերութեան վերաբերեալ եւ խսկապէս. Փեռդալական արտադրութեան եղանակի տնտեսական զարգացման արածաբանութիւնը յանդեց սօցիալական յեղափոխութեան, որը վերջացաւ կապիտալի զմի կատարեալ յազմանակով: Բայց, օրինակի համար, հին Եգիպտոսի կամ Չինաստանի անտեսութեան զարգացման արածաբանութիւնը չըերաւ հին աշխարհի արտադրական ձեւերն առաջացաւ երկու մէջ մէջ է, որոնցից մէկը չաջորդում է միւսին և առաջացում է նրան ով: Երկրորդ դէպքը ներկայացնում է աւելի շուտ անտեսական զարգացման երկու ընթացակից ձեւեր (сочувствующих типов): Հին աշխարհի հասարակակարգը փոխարինեց առհմային հասարակական կազմութեանը. նոյն կազմակերպութիւնը գույթիւն ուներ արեւելեան հասարակական մասունքի ծագութիւնը առաջ Տնտեսական կառուցւածքի այդ երկու ձեւերից իւրաքանչյւրը հետեւանքն էր տոհմալին կազմակերպութեան ծոցում անող արտադրական ոլմերի զարգացմանը, որը անխօսութելիորէն պէտք է քայլքայէր այդ կազմակերպութիւնը: Եւ եթէ այդ երկու ձեւերը խիստ տարբերում են իրարից, այդ գէպքում նրանց տարբերման զիմանը զծերը կերպարանաւորեցին աշխարհի անտեսական ոլմերի ազգեցութեան աշխարհի այդ անտեսական ոլմերի զարգացման որոշ աստիճանի

հասած հասարակութեանը արտադրական յարաբերութիւնների մի համեմեթքում, իսկ միւս գէ պըսս մառաշխից բարոսվին տարբեր արտադրական յարաբերութիւնների մի ուրիշ համախմբում:

Տահմալին կազմակերպութեան գիւտին, ինչպէս երեսում
է, վիճակւած է այնպիսի դեր խաղալ հասարակական գիտու-
թեան մէջ, որպիսի դեր խաղում է կենսախօսութեան (био-
логия) մէջ բնինի գիւտը: Եւ քանի դեռ Մարքսն ու Էն-
գելսը ժանօթ չեն ալլ կազմակերպութեան նետ, հասարա-
կութեան զարգացման նրանց թէօրիաի մէջ բաշոր բացեր
չեն կարող չմնալ, որը ինչպէս և յետադալում խօստովաճեց,
ինը էնգելսը:

Սակայն տուժմալին կազմակերպութեան դրւար, որ առաջնը տւաւ հասարակական զարգացման ստորին աստիճանները հասկանալու բանալին, հանգիսայաւ մի նոր և կարեօր փաստ ոչ թէ ընդդեմ պատմութեան մատերիալիստական բացագրութեան, այլ յօդուտ նրաւ Ալդ գիւար հնարաւորութիւն տւաւ աւելի լաւ զննելու այն, թէ ինչպէս էին կազմուում հասարակական կեանքի առաջին Փաղերը և թէ ինչպէս այն ժամանեակներուում հասարակական կեանքը որոշում էր հասարակական մտածողութիւնը: Եւ դրանով այդ գիւար զարմանալի կերպով լուսաբանում է այն ֆշմարտութիւնը, որ հասարակական մտածողութիւնը պայմանաւորւած է հասարակական կացութեամբ:

Ինչ և իցէ, գա ի միշի ալլոց։ Գլխաւորը, ինչի վրայ
ալստեղ պէտք է ուշադրութիւն գարձնել, զա Մարքսի այն
ցուցմունքն է, որ արտադրական ոյժերի զարգացման տևելու
աստիճանի վրայ կերպարանաւորւած ունեցւածալին բարա-
րերութիւնները որոշ ժամանակւայ ընթացքում նպաս-
տում են այդ ոչժերի չետագայ զարգաց ճանը
իսկ չետոյ արգեն սկսում են խանգարել դրան¹⁾։ Դա

¹⁾ Τηρούνται όμως απρότιμείς: Ήτοι οι αποθέωσις της πόλης από την θάλασσαν με την αποτέλεσμα της αποτελεσματικής πολιτικής της στην παραγωγή της γεωργίας, η οποία είναι η πιο σημαντική για την απόδοση της πόλης. Η πόλη διαθέτει μεγάλη αποτελεσματική βιομηχανία, κυρίως στην παραγωγή της γεωργίας, η οποία είναι η πιο σημαντική για την απόδοση της πόλης.

մեշնում է մեղ այն, որ թէև արտադրական ոչժերի տւեալ կացութիւնը պատճառ է գառնում արտադրական և մասամբ ունեցւածալին լարաբերութիւների առաջանալուն, բայց երբ արդէն այդ լարաբերութիւնները առաջ են եկել որպէս հետեանք ցուցադրած պատճառի, նրանք իրենց կողմից սկսում են ազգել այդ պատճառի վրայ: Այդպիսով ստացւում է փոխազդեցութիւն արտադրական ոյժերի և հասարակական տնտեսութեան միջև: Եւ որովհետեւ արնատեական հիմքի վրայ բարձրանում է հասարակական լարաբերութիւնների, զգացմունքերի և հասկացողութիւնների մի ամբողջ վերնաշէնք, և որովհետեւ այդ վերնաշէնքը նոյնպէս սկզբում նպաստում է, իսկ լետոյ խանգարում տնտեսական զարգացմանը, զրա համար էլ վերնաշէնքի ու հիմքի միջև նոյնպէս առաջ է գալիս փոխազդեցութիւն: և այդ փոխազդեցութիւնը պարունակում է իր մէջ այն բոլոր երկոյթեների լուծումը, որոնք առաջին հայեացքից թւում են հակասական պատմական մատերիալիզմի հիմնական խնդրի վերաբերեալ:

Սին բոլորը, ինչ որ մինչեւ այսօր առել են Մարքսի «քննադատները» մարքսիզմի կարծեցեալ միակազմանիութեան և նրա որպէս թէ արհամարհական վերաբերմունքի մասին գէպի հասարակական զարգացման բոլոր ռֆակտորները», բացի տնտեսական Փակտորից, այդ բոլորը բացագրւում է այն պարզ պատճառով, որ այդ «քննադատները» չեն կարողացել հասկանալ այն գերը, որ տալիս են Մարքսն ու Էնդելը «հիմունքի» և ավերենաշէնքի» միշեւ եղած փոխազդեցութեանը: Հաճողւելու համար, օրինակ, այն բանում, թէ Մարքսն ու Էնդելը որբան ըիչ էին աչքաթող անում քաղաքական Փակտորի նշանակութիւնը, բա-

1899) Շուարը աշխատութիւնը: Ժ. ջ. Շպեկ (Speke) ին «Le sourels du Nil» (Paris, 1865, թ. 21)-ում ասում է, որ ներդրի շրջանում՝ սորումները անպայմ ու ամօթալի գավճն մն համարում իրնց համար վոր վժառած տիրոքց վախչութ: Դրան ուշար է ամեւացնել նաեւ, որ նոյն սորումները իրնց դրութիւնը համարում են ամեւ պատասր, բայ վարձու բանուրի գործիւնք: Այդ աշխացքը համպատականում է այն Փագին, երբ սորդութիւնը մնում էր տակալիս որպէս յառաջապահական երիտոյ:

ւական է կարդալ Ակոմմունիստական մանիֆեստի» այն երեսները, որտեղ խօսւում է բուրժուազիալի աղատարոր շարժման մասին: Այնտեղ առաջ է.

«Բուրժուազիան, —որը ներկայացնում էր ֆեոդալների բեռան տակ ճնշւած այն գասը, քաղաքալին կոմմունալի մէջ ինքնավար ու զինւած այն ասոցիացիան: —բուրժուազիան — որը այստեղ անկախ քաղաքալին հասարակապետութիւնն է, այնտեղ միապետական կռապավարութեան երրորդ հարկատու դասը, —բուրժուազիան, —որը յետագայում բացարձակ կամ ստհմանափակւած զասական ներկայացչութեամբ երեան եկաւ որպէս ազնւականութեանը հակընթեր մի տարր միապետութեան մէջ: —բուրժուազիան: —որը ընդհանրապէս մեծ միապետութիւնների հիմքն է կազմել: —այդ բուրժուազիան խոշոր արդիւնաբերութեան ու համաշխարհային շուկալի երեան գալով զրաւեց վերջու նորագոյն սահմանադրական պետութեան մէջ քաղաքական բայցառիկ իշխանութիւն: Փամանակիս պետական իշխանութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի հօմիտէտ, որն ընտրւած է բուրժուազիալի հասարակական գործերը վարելու համար»:

Քաղաքական «Փակտորի» նշանակութիւնը ալստեղ երեւան է բերւած շատ, —մի քանի «քննադատները» գտնում են, որ նոյնիսկ չափազանցեցրած, —պարզութեամբ: Բայց այդ ռֆակտորի ոյժն ու ծագումը, ինչպէս և իրաքանչիւր տւեալ շրջանում նրա ներդրման բուրժուազիալ զարգացման վրայ, և մանիֆեստումը բացարձում են տնտեսական զարգացման ընթացքով: Այդ իսկ պատճառով «Փակտորների» զանազանակերպութիւնը ոչ մի կերպ չի խախտում արմատական պատճառի ամբողջութիւնը:

Քաղաքական լարաբերութիւնները անկասկած աղջում են տնտեսական շարժման վրայ: Բայց անկասկած է նոյնպէս, որ նախ քան նրա վրայ ազգելը, իրենք ստեղծւում են տնտեսական պատճառով:

Նոյն բանը պէտք է ասել նաև հասարակական մարդու հօգեբանութեան մասին, ինչ որ Շտամմերը մի ըիչ միակօղմանի կերպով անւանում է հասարակական հասկացողութիւններ։ «Մանիֆեստ» շատ համոզեցուցիչ կերպով ցուց է տալիս, որ նրա հեղինակները լաւ հասկանում էին իդէական «Փակտորի» նշանակութիւնը։ Բայց նոյն «մանիֆեստ» մենք տեսնում ենք, որ եթէ իդէական «Փակտորը» կատարում է կարեոր դեր հասարակութեան զարգացման մէջ, այդ դէպքում նա ինքը նախապէս ստեղծւում է այդ զարգացումով։

«Երբ հին աշխարհը լանգեց իր անկճանը, քրիստոնէութիւնը լաղթեց հին կրօններին։ Երբ քրիստոնէական իդէաները զիշեցին իրենց տեղը 18-րդ դարի լուսաւորչական իդէաներին, այդ ժամանակ աւատական (Փեոլալական) հասարակութիւնը կեանքի և մահւան կռիւ էր մղում դեռ այն ժամանակ լեզափոխական բուրժւազիալի դէմք։ Այդ տեսակէտից աւելի համոզեցուցիչ է «մանիֆեստի» վերջին դրյուխը։ Նրա հեղինակները այդ դիմում ասում են, որ նրանց կողմանիցները ձգտում են բանւորների մաքի մէջ ստեղծել որքան կարելի է աւելի պարզ գիտակցութիւն այն բանի, որ բուրժւազիալի և պրոլետարիատի շահերը հակառակ են իրար։ Ամեն մարդ կհասկանալ, որ ով նշանակութիւն չէ տալիս իդէական «Փակտորին», նա ոչ մի արամարանական հիմք չի ունենալ ձգտելու որևէ հասարակական խմբակի մէջ որևէ գիտակցութիւն ստեղծելու համար։

X.

Մենք գերագասում ենք ցիտատներ առաջ բերել «մանիֆեստից» և ոչ Մարքս-Էնդելսի միւս գրւածքներից, որովհետեւ «մանիֆեստ» վերաբերում է նրանց գործունէութեան այն սկզբնական շրջանին, երբ նրանք, ըստ նրանց «քնազատներից» մի քանիսի հաւասարացութերի, լատիապէս (միակողմանի էին) հասարակական զարգացման «Փակտորների» վիճակարձ լարաբերութեան վերաբերեալ։ Մենք պարզ տեսնում

ենք, որ այդ շրջանում նրանք աչքի էին ընկնում ոչ թէ «միակողմանիութեամբ», այլ ձգտում էին հասնել մօնիդմի, զգւանք տածելով դէպի այն էկլէկտիզմը, որը այնպէս պարզ աչքի է ընկնում պ. պ. «քննադատների» գրւածքների մէջ։

Յանախ մատնանշում են „Sozialistischen Akademiker“-ում տպւած Էնդելսի երկու նամակները, որոնցից մէկը գրւած է 1890 թ. իսկ միւսը՝ 1894 թւին։ Բերնշտէնը մի ժամանակ ուրախութեամբ կախ լնկաւ այդ նամակներից, որոնք որպէս թէ պարզօրէն վիճաւմ են այն փոփոխութիւնը, որը ժամանակի ընթացքում առաջ է եկել Մարքսի կողմանիցի և բարեկամի հայեացքների միջև։ Այդ նամակներից նա արել է երկու, նրա կարծիքով, աւելի համոզեցուցիչ քաղւածքներ, որոնք մենք հարկ ենք համարում առաջ բերել այստեղ, որովհետեւ հենց այդ քաղւածքները ցուց են աալիս բոլորովին հակառակը այն բանի, ինչ ուգեցել է ապացուցել պ. Բերնշտէնը։

Ահա այդ քաղւածքներից առաջինը. «Այդպիսով կան փոխագարձ խաչաձեւող անթիւ ոչմեր, զուգահեռ ոչմերի անվերջանալի շղթայ, որոնք առաջ են բերում հաւասարակառող ոչմ (պատմական որևէ դէպք)։ Վերջինս կրկին կարող է զիտակ որպէս արդիւնք առանց գիտակցութեան ու կամքի գործող ոչմի, որովհետեւ այն, ինչ ցանկանում է իւրաքանչիւր մարդ առանձին վերցրած, արգելքի է հանգիպում միւս բոլորի կողմից, և այն ինչ ստացւում է վերջում, մի բան է, որ չէր ցանկանում ոչ ոք»։ (1890 թ. նամակը)։

Ահա և երկրորդ քաղւածքը. «Բազարական, իրաւական, փիլիսոփայական, կրօնական, զրական, զեղարւեստական և հասարակական կեանքի միւս բոլոր կողմերի զարգացումը հանգչում է տնտեսականի վրայ։ Բայց դրանք բոլորը աղելովի իրար վրայ, ազգում են նաև տնտեսական բազի վրայ» (1894 թ. նամակը)։ Պ. Բերնշտէնը գտնում է, «որ զա հնչում է մի ըիչ ալլ կերպ», քան „Zur kritik der politischen oekonomie“-ի յառաջարանը, ուր խօսւում է միայն տնտեսական անհմաւն-

թի» ու նրա վրայ կառացւած «պերնաշէնքի» միջև եղած կապի մասին։ Բայց ինչու այդ հնչում է այլ կերպ։ Այստեղ կրկնում է հենց այն, ինչ առած է լիշեալ յառաջարանի մէջ—որ քաղաքական և միւս տեսակի բոլոր զարգացումները հանդչում են տնտեսականի վրայ։ Պարզ է նոյնպէս, որ պ. Բերնշտէնը „Zur kritik“-ի յառաջարանը հասկացել է «մի քիչ այլ կերպ», այսինքն այն մտքով, որ տնտեսական «հիմունքի» վրայ հանդչող հասարակական և գաղափարական «վերնաշէնքը» այդ «հիմքի» վրայ ոչ մի հակառակ ազդեցութիւն չի գործում։ Բայց մենք արդէն գիտենք, որ աւելի սխալ բան չկայ, քան Մարքսի միտքը արդպէս հասկանալը. և պ. Բերնշտէնի «քննադատական» փորձերին հետեւող մարդկանց միում էր միան զլուխ թափ տալ, տեսնելով, որ մի ժամանակ մարքսիմն աւելի նիշտ ընդհանրացնող մարդը չանք գործ չէ զրել—կամ անընդունակ է եղել—նախապէս հասկանալու այդ ռւսմունքը։

Երկրորդ նամակում, որից քաղածներ է անում պ. Բերնշտէնը, կան տեղեր, որոնք աւելի քան կարեոր են Մարքս—էնդէլսի պատմական մէկօրիալի պատճառական միտքը պարզաբնելու համար, քան մեր առաջ բերած աղջերը, որոնք այնպէս վատ է հասկացել պ. Բերնշտէնը։ Այդ տեղերից մէկում առած է. «Նշանակում է դա պէտք է հասկանալ ոչ այնպէս ինչպէս հասկանում են ուրիշները, այսինքն.—տնտեսական գրութիւնը գործում է մեքենարար, բայց այնպէս, որ մարդիկ իրենք են անում իրենց պատմութիւնը, որը սական արւում է մարդկանց պայմանաւորոց տւեալ միշավարում, հիմուած տւեալ փաստական յարաբերութիւնների վրայ։ Վերջիններիս մէջ անտեսական յարաբերութիւնները (ինչքան էլ ուժեղ լինի սրանց վրայ քաղաքական և գաղափարական յարաբերութիւնների աղջեցութիւնը) վերջի վերջոյ ամենից աղջեցին են, կազմելով այն կարմիր թելք, որը անցնում է միւս բոլոր յարաբերութիւնների միջով և որը միան բերում է մեզ շրջապատի նիշտ հասկացողութեանը»։

«Ուրիշ» մարդկանց թւին, որոնք Մարքս—էնդէլսի պատմական ռւսմունքը մեկնարանում են այն մտքով, որ պատմութեան մէջ «անտեսական դրութիւնք գործում է մեքենաբար», պատկանում էր, ինչպէս մենք այդ տեսանք, ինքը Բերնշտէնը իր «աւղափառ» տրամադրութիւնների շրջանում, և մինչեւ այժմ պատկանում են Մարքսի շատ և շատ «քննադատաներ», որոնք յետ են գնում—«մարքսի զմից գէպի իդէալի զմ»։ Այդ խորիմասա մարդիկ մեծ ինքնարաւականութիւն են երեան հանում, գանելով և Կմիակողմանի» Մարքսին ու էնդէլսին հրացյանելով այն գատաղութիւնը, որ պատմութիւնը արւում է մարդկանցով և ոչ թէ անտեսութեան մէքենական շարժումով։ Նրանք Մարքսի հետ հակառ են խփում հենց նրա՝ Մարքսի բարեիրով և իրենց անհաւատալի անմեղութեան մէջ չեն կասկածում նոյնիսկ, որ այն «Մարքսը», որին նրանք «քննադատում» են, ոչինչ ընդհանուր բան չունի, բայց անունից, իսկական Մարքսի հետ, և որ այդ «Մարքսը» ստեղծւած է հարցը հենց իրենց կողմից բազմակողմանի կերպով չհասկանալու շնորհիւ։ Բնական է, որ այդ կալիբրի «քննադատաները» բոլորովին անընդունակ էին «լրացնել», «օրբազրել» պատմական մատերիալիզմը։ Դրա համար էլ այլևս զրանցով չենք զբաղւի, զերազասելով գործունենալ այդ թէօրիալի հիմնագիրների հետ։

Խիստ կարեոր է նկատել, որ երր էնդէլոր գեռ վաղուց մինչեւ իր մահը ժխտում էր տնտեսութեան պատմաշատա ւերգործման «մեղենական» հասկացողութիւնը, նա դրանով միայն կրկնում էր,—համարեալ թէ նոյն բառերով, —և պարզաբանում այն, ինչ գրել էր Մարքսը գեռես 1845 թ. Ֆէլերբախի մասին իր երկրորդ թէզիսում, «ը մենք մէջ ենք բերել վերեւում։ Այդտեղ Մարքսը պախարակում է նրանից առաջ գոյութիւն ունեցող մատերիալիզմին այն բանի համար, որ նա մռանում էր այն, որ եթէ մի կողմից մարդիկ արդիւնք են պայմանների, բայց և միւս կողմից այդ պարմանները փոփոխում են հենց մարդկանցով։ Պատմութեան մէջ մատերիալիզմի խնդիրն է

(ինչպէս հասկանում էր այդ խնդիրը Մարքսը) — բացադրել, թէ ինչպէս ռպայմանները կարող են փօփախւել այն մարդկանցով, որոնք իրենք ստեղծւում են այդ պայմաններով։ Եւ այդ խնդիրը վճռում է արտադրական յարաբերութիւնների միջոցով, որոնք առաջ են զալիս մարդկային կամքից անկախ պայմանների ազգեցութեան տակ։ Արտադրական յարաբերութիւններ — դա մարդկանց յարաբերութիւններն են հասարակական արտադրութեան պրոցեսի մէջ։ Ասել, թէ փոխւեցին արտադրական յարաբերութիւնները, նշանակում է ասել որ փոխւեցին մարդկանց փօփախարձ յարաբերութիւնները լիշեալ պրոցեսի մէջ Այդ յարաբերութիւնների փոփխւելը չի կարող կատարւել «մերենաբար», այսինքն անկախ մարդկային դորժունէութիւնից, որովհետև այդ յարաբերութիւններն են, որոնք ստեղծւում են մարդկանց միջև նրանց դորժունէութեան ընթացքում։

Բայց այդ յարաբերութիւնները կարող են փոփխւել, — և շատ յաճախ իսկապէս փոփխւում են, — ոչ բոլորովին այն ուղղութեամբ, ինչ ուղղութեամբ որ կցանկանաչին մարդիկ փոխել նրանց։ «Ճնակեսական սարուկառութայի» բնոլթը և այն ուղղութիւնը, ինչ ուղղութեամբ որ փոփխւում է այդ բնոլթը, կտիւած է ոչ թէ մարդկանց կամքից, այլ արտադրական ոյժերի կացութիւնից և այն բանից, թէ արտադրական յարաբերութիւնների մէջ իսկապէս ինչպիսի փոփխութիւններ են առաջ դալիս և անհրաժեշտ դառնում հասարակութեան համար՝ որպէս հետեանք այդ ոյժերի յետագալ զարգացման էնդեկսը լուսաբանում է այդ հետեալ խօսքերով։ «Մարդիկ իրենք են անում իրենց պատմութիւնը, բայց մինչև այժմ նրանք արել են այդ պատմութիւնը (նոյնիսկ առանձին հասարակութիւնների մէջ) ոչ համաձայն ընդհանուր կամքի, և ոչ էլ համաձայն ընդհանուր պլանի։ Նրանց ձգտութերը փոխադրձարար խաչաձեւում էին, և հենց դրա

համար էլ բոլոր նման հասարակութիւնների մէջ թագաւորում է անհրաժեշտութիւնը, որին որպէս լրացում և երեան զալու արտաքին ձև ծառայում է պատահականութիւնը։ Այստեղ մազկալին գործունէութիւնը սրոշում է ոչ թէ որպէս ազատ, այլ որպէս անհրաժեշտ գործունէութիւն, այսինքն օրինաչարմար (законосообразная) գործունէութիւն, որ կարող է գառնալ գիտական հետազօտութեան առարկայի Ալգայիս, պատմական մատերիալիզմը չգաղարելով մատնանշել այն բանը, որ պայմանները փոփխւում են մարդկանցով, միենուն ժամանակ առաջին անգամ մեղ հնարաւորութիւն է տալիս գիտել այդ փոփօխութեան պրոցեսուր գիտական տեսական նեսակետից։ Եւ ահա ինչու մենք կատարեալ իրաւունք ունենք առելու, որ պատմութեան մատերիալիստական բացադրութիւնը տալիս է անհրաժեշտ նախագուռ (пролегомены) մարդկային հասարակութեան մասին եղած ամեն մի ուսմունքի համար, որը կ'ցանկանալ կառուցւել որպէս գիտութիւն։ Եւ դա այն աստիճան նիշդ է, որ արդէն ներկայումս հասարակական կենարի ար կամ այն կողմի ամեն մի ուսումնասիրութիւն գիտական արժէք է սահմանում միայն այն չափով, ինչ չափով որ այդ ուսումնասիրութիւնը մօտենում է հասարակական կենարի տւեալ կողմի մատերիալիստական բացադրութիւնը (չնայած հոչակաւոր ըիդէալիզմի յարութեանը) հասարակական գիտութիւնների մէջ) աւելի և աւելի սովորական է դառնում այնտեղ, ուր ուսումնասիրողը չի տարւում ըիդէալիս։ մասին խրատական խորեգածութիւններով ու նոռոմարանութեամբ, այլ նպատակ է զնում իրեն երեան հանելու երեսլների պատճառական կապը։ Իրենց ուսումնասիրութիւնների մէջ երեան են դալիս որպէս մատերիալիստներ նոյնպէս այնպիսի մարդիկ, որոնք ոչ միայն չեն ընդունում պատճութեան մատերիալիստական տեսակէտը, այլև շատ հասարակ կերպով ոչ մի հասկացողութիւն չունեն նրա մասին եւ այդ տեսակէտի հետ նրանց ժանօթ չինելը

կամ նրանց նախապաշտունքը դրա վերաբերեալ, որ իւսն-
գարում է այդ տեսակէտը բազմակողմանի կերպով հասկակա-
լուն, իսկապէս բերում է այն բանին, ինչ հարկաւոր է ան-
ւանել հասկացողութիւնների միակողմանիութիւն և նեղու-
թիւն:

XI.

Ահա լաւ օրինակ: Տասը տարի սրանից առաջ ֆրան-
սիացի լալտնի դիտնական Ալֆրէդ Էսպինասը, որը, ի դէպս
ասած, մեծ թշնամի է ժամանակակից սոցիալիստներին, — հրա-
տարակեց շափազանց հետաքրքիր (լամենան դէպս բառ նրա
ունեցած մտքի) «Սոցիոլոգիական էտիւդ» — „Les origines de
la Technologie“: Այդ աշխատութեան մէջ նա, ելնելով այն
զուտ մատերիալիստական տեսակէտից, որ մարդկութեան
պատմութեան մէջ գործնականը (պրոకտիկա) միշտ էլ նա-
խընթեր է տեսականին (տեօրիս), բնուում է տեխնիկայի
ազգեցութիւնը ի դէուդիան երի, ալսինքն՝ լատիապէս հին
Յունաստանի կրօնի և փիլիսոփայութեան վրայ: Եւ նա գա-
լիս է այն եզրակացութեան, որ այդ զարգացման իւրա-
քանչիւր տւեալ ըրջանում հին լոյների աշխարհականցը ը-
սրոշւում էր նրանց արտադրական ոչմերի զրութեամբ: Դա,
անշոշտ, շատ հետաքրքիր և կարենք եզրակացութիւն է:
Բայց այն մարդը, որ սովոր է պատմական երևոյթները բա-
ցադրելու դեպքում կիրառել մատերիալիզմը դիտակցարար,
ժանօթանալով էսպինասի «Էտիւդի» հետ, հաւանականարար
կլայ այն եզրակացութեան, որ նրանում արտաքայտած տե-
սակէտը միակողմանի է: Եւ դա այն հաստրակ պատճա-
ռով, որ ֆրանսիացի դիտնականը հոմարեա ոչ մի ուշադրու-
թիւն չէ գարձրել իդէոլոգիաների զարգացման միւս «Փակ-
տորների» վրայ, ինչպէս օրինակ դասակարգալին կուի
վրայ. մինչդեռ այդ ոփակտորը» ունի իսկապէս հսկայական
նշանակութիւն:

Նախնական հասարակութեան մէջ, «ըստ չփիաէ գասա-
կարգերի բաժանում, մարդու արտադրական գործունէութիւ-

նը ազդում է նրա աշխարհականցը ու զեղարւեստական հա-
շակի վրայ անմիշական ապէս: Օրինամենաթիկան իր մօտիվ-
ները վերցնում է տեխնիկալից, իսկ պարը, — որ համարեա թէ
ամենակարեսոր զեղարւեստական արտաքայտութիւնն է այդպի-
սի հաստրակութեան մէջ, — լաճախ սահմանափակւում է արտա-
դրական պրոցեսսի պարզ վերաբարեպումով: Դա լատիապէս
նկատելի է որ սորգական ցեղերի մօտ, որոնք կանգնած են
անտեսական զարգացման այն ամենասոտոր աստիճանի վրայ,
որը կարող է ենթակայ լինել մեր զիտողութեանը¹⁾: Դրա համար
էր, որ մենք զիտաւորապէս կանգ ենք առնում այդ ցեղերի
վրայ, երբ վերեւում խօսքը նախնական մարդու հոգերանու-
թեան՝ նրա անտեսական գործունէութիւնից կա-
խում ունենալու մասին էր: Բայց գասակարգերի բաժանուած
հասարակութեան մէջ այդ գործունէութիւն տնօթիչական
ազգեցութիւնը իդէոլոգիալի վրայ աւելի քիչ է նկատելի
գառնում: Եւ դա հասկանալի է: Եթէ, օրինակի համար, աւո-
տրալիական կնոջ պարի տեսակներից մէկն այն է, երբ նա
պարի մէջ վերաբարեպում է արմատիք հաւաքելու-
աշխատանքը, այդ գէպքում ինքն իրեն հասկանալի է,
որ և ոչ մէկը այն շնորհալի պարերից, որոնցով զւարեանում
էին, օրինակի համար XVIII-րդ դարի ֆրանսիայի աշխարհական
գեղեցիունիները, չէր կարող լինել այդ կանանց արտգրական
աշխատանքի արտաքայտութիւնը, որովհետև և ոչ մի ար-
տադրական աշխատանքով նրանք չեն պարապում, տարւե-
լով զիտաւորապէս «քննույթ կը քիտութեամբ»: Աւսուրա-
լիական բնիկ կնոջ պարը հասկանալու համար բաւական է
իմանալ, թէ ինչ դեր է խաղում աւտորալիական ցեղերի
կեանքում կանանց վայրի բոյսերի արմատիք հաւաքելը: Իսկ,
առենք, մենւէտ պարը հասկանալու համար բալորովին բաւա-
կան չէ XVIII-րդ դարի ֆրանսիայի տնտեսութիւնն իմա-
նալը: Այսաեղ մենք գործ ունինք մի պարի հետ, որն արտա-

¹⁾ Որսորներց առաջ կային շաւար քողներ — Sammelvölker, — ինչպէս
արտաքայտում ան այժմ գերմանացի զիտականները: Բայց մոտ յայտնի բոլոր
վայրենի ցեղարու առեն անցել են այդ տափթանը:

լայսում է չարտադրող գասակարգի հոգեբանութիւնը: Ազդ հոգեբանութեամբ է բացադրում ալսպէս կաչւած կանոնաւոր հասարակութեան ասովորութիւնների ու բազարավարութիւնների մեծագոյն մասը: Կնշանակէ տնտեսական «Փակտորը» ալստեղ զիշում է իր պատիւն ու տեղը հոգեբանական «Փակտորին»: Բայց մի մռանաք, որ հասարակութեան մէջ չարտադրող գասակարգերի երևան գալը արդիւնք է նրա տնտեսական զարգացման: Նշանակում է, որ անտեսական «Փակտորը» կատարելապէս պահպանում է իր գերակշառաց նշանակութիւնը նոյնիսկ այն ժամանակ, երբ իր տեղն ու պատիւր զիշում է ուրիշներին: Ընդհակառակը, այդ ժամանակ է, որ իրեն զգալ է տալիս այդ նշանակութիւնը, որովհետեւ այդ ժամանակ նրանով որոշւում են ծիւս «Փակտորների» հնար աւորութիւնն ու ներգործման սահմանները¹⁾:

Բայց այդ գեռ բոլորը չեն: Բարձր գասակարգը նոյնիսկ այն ժամանակ, երբ մասնակցում է (որպէս զեկավար) արտադրական աշխատանքի մէջ, նայում է ստորին գասակարգի վրայ բացայալտ արհամարհանքով: Դա նոյնիսկ արտացոլում է երկու գասակարգերի իդեոլոգների վրաք: Մրանսիտիան միջնադարեան fabliaux, մանաւանդ les chansons de gestes,— նկարագրում է այն ժամանակւայ գիւղացուն ամենանդուրիչնական վիճակում: Եթէ հաւատանք նրանց, այդ գեպքում:

¹⁾ Առա օրինակ մի ուրիշ տեսլից: «Փակտոր ընականիւնը»,— ինչու՞ արտայայտում է Ա. Կուտը (նայիր նրա «Le facteur population dans l'évolution sociale, Paris 1901») մնկանած մաս ազգայտիւն է զորում հասարակական զարգացման մրայ: Այսց Մարքսը բոլորովին իրաւ է, նոր առում է, որ բազմացման գերացական օքները պայմանավոր ունեն միայն կենդանիների նամակագրութեան առնելու մարդկանց հարաբեկութեան մէջ կախած է այդ հասարակութեան կազմութիւնից, որը որոշում է նրա տնտեսական սուրուսուրայով: Ոչ մի «բազմացման աբուրքը չի կարող բացարիւ մաս այն միասոց, որ ժամանակակից փրամիայի ազգաբնակութիւնը համարեա թէ չի ամենատաք: Շատ սիսլում են այն սոցիոլոգներն ու էկոնոմիստները, որոնք ազգայնակութեան ամենա մէջ տեսնում են հասարակական զարգացման որուր ականական պատճառը» (Նայիր Ա. Լորիա. La legge di popolazione edil sistema sociale: Siena 1882).

„Li vilaen sont de laide forme
Ainc si tres laide ne vit homme;
Chaucuns a XV pjez de granz
En auguls ressemblent fâianz
Mais trop sont be daide maniere
Boçeu sont deoant en derriere“¹⁾.

Իսկ գիւղացիք, հասկանալի է, նայում էին իրենք իրեն, վրայ ուրիշ աչքերով, զայրանալով Ֆէոդալների մեծամասնութեան վրայ: Նրանք երգում էին.

Մենք էլ այնպիսի մարդիկ ենք, ինչպէս և նրանք.
Եւ նոյնպէս տանշւելու ընդունակ, ինչպէս և նրանք
ևայն:

Եւ նրանք հարցնում էին. «Ո՞րտեղ էր ազնւականը այս ժամանակի, երբ Աղամը հերկում էր, իսկ եւան՝ մանսում»: Մի խօսքով, իւրաքանչիւրը այդ գասակարգերից նայում էր երեսիթների վրայ իր սեփական հակեցակետով, որի առանձնաւատկութիւնները պայմանավորում էին հասարակութեան մէջ: Նրա ունեցած զիրքով: Դասակարգավին կոխով գունաւորում է պայքարող կողմերի հոգեբանութիւնը: Եւ այդպէս եղել է ի հարկէ, ոչ միմիայն միշին դարերում և ոչ էլ միայն ֆրանսիայում: Եւ ինչքան աւելի սուր կերպարանք է սահման գասակարգավին կոխով տւեալ երկրում և տւեալ ժամանակում: Այնքան աւելի ուժեղանում է նրա ազգեցութիւնը պայքարող գասակարգերի հոգեբանութեան վրաք: Ով ուզում է գասակարգերի բաժանւած հասարակութեան գաղափարներն ու սումահարելի, նրան անհրաժեշտ է ուշադիր կերպով նկատի առնել այդ ազգեցութիւնը: Ալ կերպ նա ոչինչ չի հասկանայ: Փորձեցէք անմիշական— տնտեսական բացադրութիւն տալ 18-րդ գարի ֆրանսիական նկարչութեան մէջ Դաւիթի դպրոցի երեան գալու փատին: Գրանից ոչինչ դուրս չի գայ, բացի ծիծագելի և ձանձրակի դատարկանութեան սիր ական պատճառը» (Նայիր Ա. Լորիա. Les glasses rurales et le régime domanial en France en moyen, par Henri Sél, Paris, 1901, p. 554).

թիւնից բայց փորձեցէք զիտել այդ դպրոցը որպէս գաղափարական արտայալքութիւն այն դասակարգավիճն պալքարի, որը տեղի էր ունենում մեծ լեզափոխութեան նախօրեակին ֆրանսիական հասարակութեան մէջ, այն ժամանակ դործը բոլորավիճն ալլ ընթացը կատանայ. — Ճեզ համար կատարելապէս հասկանալի կդառնան Դաւիթի նկարչութեան նոյնիսկ այն լատկութիւնները, որոնք թւում էր թէ շատ հեռու են հասարակութեան անտեսութիւնից և որ ոչ մի կերպ /չե՛ն կարող կապւել այդ տնակետութեան հետ

Նոյնը պէտք է առել նաև հին Յունաստանի գաղափար-ների պատմութեան մասին, որը իր վրայ կը ել է գասահար-դալին պայքարի ամենախոր ազդեցութիւնը: Եւ ահա հետ-այդ ազդեցութիւնը շատ քիչ է զժագրւած Էստինասի հայ-դի մէջ, որի շնորհիւ նրա կարևոր եղբակացութիւնները ստացել են միակողմանի բնաւորութիւն: Ներկայումս արդէն այդպիսի օրինակներ շատ կարելի է բերել և բոլոր այդ օրի-նակները ցուց կտալին, որ Մարքսի մատերիալիզմի ազդեցու-թիւնը ժամանակակից մասնագէտներից շատերի վրայ կինէր աւելի քան բարենպաստ այն մաքով, որ այդ ուսմունքը կ սպ-րեցնէք նրանց ուշադրութեան առնել բացի աւելի նիկական և տնտեսական «Փակտորներից» և առ-ուրիշ «Փակտորներ»: Դա պարագուսի նման է: Բայց դա անվիճելի նշանաւութիւն է, որը կդադարի մեզ զարժացնե-լուց, եթէ մենք լիշենք, որ թէե Մարքսի մօտ ամեն մի հա-սարակական շարժում բացազրւում է հասարակութեան տնտե-սական զարգացմանը, բայց այդ շարժումը դրանով բացա-դրւում է միայն վերջին հաշւով, արսինքն՝ ենթադրւում է մի շարք ուրիշ «Փակտորներից» միջանկեալ ներդործութիւն:

XII.

Ներկայումս ժամանակակից զիտութեան մէջ սկսում է երեան գալնակ մի ուրիշ ուղղութիւն, բոլորօքին հակառակ այն ուղղութեանը, ինչ որ քիչ առաջ մենք տեսանք էովինասի մօտ: Այդ ուղղութիւնն է՝ բացազրել զաղափարների պատմութիւնը բացառապէս դաստիարգացին կրո-

ւով Ալլ բոլորովին նոր և առաջմմ քիչ արտայալուած ուղղութիւնը առաջ է եկել Մարքսի պատմական մատերիալիզմի անմիջական աղբեցութեան տակ: Ալլ ուղղութիւնը մենք հանդիպում ենք լոյն Ա. Էլիֆերոպուլսի գրւածքների մէջ, որի գլխաւոր աշխատութիւնը - «Wirtschaft und Philosophie. I. Die Philosophie und die Lebensauffassung des Griechenthums auf Grund der gesellschaftlichen Zustände. II Die Philosophie und die Lebensauffassung der germanisch-römischen Völker», լրատեսաւ Բեռլինում 1900 թ: Էլիֆերոպուլսը համուած է, որ իւրաքանչիւր տւեալ ժամանակի փիլիսոփայութեան մէջ արտայալում է այդ ժամանակին իւրայատուկ «կեանքի վերաբերեալ եզած աշխարհայեցքն ու տեսակէտը» (Lebens- und Weltanschauung): Ճիշտն առած, դա նորութիւն չէ: Դեռ չէդէյն առում էր, որ ամեն մի փիլիսոփայութիւն իր զարեցրչանի արտայալութիւնն է միայն: Սակայն չէդէլի համար զանազան դարեցրչանների առանձնայատկութիւնները, հետևադիս և նրանց համապատասխանող փիլիսոփայութեան զարգացման ֆազերը, որոշում են բացարձակ իդէաի շարժումով, մինչդեռ Էլիֆերոպուլսի համար ամեն մի տւեալ դարեցրչան բնոյթագրւում է ամենից առաջ նրան համապատասխանող տնտեսական դրութիւնով: Իւրաքանչիւր տւեալ ժողովաւրդի տնտեսութիւնը որոշում է նրա «կենսա-աշխարհարձրանուղաւթիւնը», որը արտայալուում է ի միշտ ալլոց նաև փիլիսոփայութեան մէջ: Տնտեսական հիմքի փոփօխումով փոփօխուում է նաև գաղափարական վերնաշէնքը: Եւ որովհետեւ տնտեսական զարգացումը բաժանում է հասարակութիւնը զասակարգերի, որոնց մէջ ոկտում է պալքար, զրա համար էլ տւեալ դարեցրչանին յատուկ «կենսա-աշխարհարձրանուղաւթիւնը» միակերպ չէ լինում, վերջինս տարրեր է տարրեր զասակարգերի մօտ և ձեափոխուում է համաձայն նրանց դրութեան, կարիքների, նրանց ձգտութերի և նրանց փոխազարձ կուի ընթացքի:

Ահա այն տեսակէտք, որպէս էլիփիրոպուլոսը նախամ է գիշտովայութեան ամբողջ պատմութեան վրայի Կարիք չկայ.

բօռել այն մասին, որ այդ տեսակէտը արժանի է մեծագոյն և շաղրութեան ու կատարեալ քաջալերանքի: Փիլիսոփայական գրականութեան մէջ վազուց արդէն նկատում էր անբաւականութիւն փիլիսոփայութեան պատմութեան այն սովորական տեսակէտի վերաբերեալ, որը զիառում է փիլիսոփայութեան պատմութիւնը որպէս փիլիսոփայական սիստեմների հասարակ կապակցութիւն։ Յալտնի ֆրանսիական զրող Պիկավէն ու թոռնական թւականների վերջում լոյս ընծանեց մի գրքով, նւիրւած այն հարցին, թէ ինչպէս պէտք է ուսումնասիրել փիլիսոփայութեան պատմութիւնը. այդ գրքովից մէջ նա ուղղակի ասում է, որ այդպիսի կապակցութիւնը շատ քիչ բան է բացագրում¹⁾: Ելեֆերոպուլոսի գըքի երեան գալը կարելի էր ողջունել որպէս մի նոր քայլ՝ փիլիսոփայութեան պատմութեան ուսումնասիրութեան մէջ և որպէս պատմական մատերիալիզմի յաղթանակ՝ տնտեսութիւնից աւելի հեռու գտնող գաղափարների ուսումնասիրութեան մէջ։ Բայց աւաղ. Ելեֆերոպուլոսը մեծ արւեստ ցոյց տւառ այդ մատերիալիզմի դիալեկտիկական մեթոդից օգտվելու մէջ։ Նա նոյնիսկ ան հնարին չափով պարզ արդեւ է իր առաջարկած ինդիքները և հենց այդ պատճառով չի կարողացել գտնել այդ խնդիրների համար ուրիշ վեճաներ, բայց իսիստ միակողմանի, հետեւապէս և անբաւար վճիռներից։ Վերցնենք թէկուղ Քսենեֆոնին։ Ելեֆերոպուլոսի առելով, Քսենեֆոննը երեան եկաւ որպէս լուսական պրոլետարիատի գիլիսոփայական արտադրութիւնը։ Դա—իր ժամանակի նուսանոն է²⁾: Նա ձգտում էր հաստրակական բարենորագումների միջոցով ստեղծել հաւատարածութիւն և միութիւն բոլոր քաջարացիների միջև. Նրա ուսունքը այն մասին, որ կեանք ը մի է, նրա բարենորագչական նախագծերի տեսական հիմնաւորութն էր միայն³⁾:

1) L'histoire de la philosophie, ce qu'elle a été, ce qu'elle peut être,
Paris 1888.

2) Ընդգծած աշխատաթիւնը, 1, էջ 98.
3) Նոյն տեղը, էջ 99.

Քսենեֆոնի բարենորագչական ձգտութների այդ տեսական ֆունգամենտի վրայ տրամարանօրէն հանգչում էն նրա փիլիսոփայութեան միւս բոլոր մասնիկները, սկսած նրա հայեցքից աստւածութեան մասին և վերջացրած մեր արտօքին զգայարանների միջոցով ստացւած պատկերացութների խարուսիկ լինելու նրա ուսմունքով¹⁾):

Դ էրակիլիսի փիլիսոփայութիւնը հետեւանք է յունական պրոլետարիատի յեղափօխական ձգտութների գէմ ուղղւած ազնւականական ռէակցիալի։ Ընդհանուր հաւասարութիւնը անհնարին է. բնութիւնն ինքն է անում մարդկանց անհաւասար։ Ամեն մարդ պէտք է գոհ մնայ իր հակատագրից։ Պետութեան մէջ պէտք է ձգտել ոչ թէ գորութիւն ունեցաղ կարգը խորտակելու, այլ մեկուսացնելու բանութիւնը. որը հնարաւոր է ինչպէս մի քանի սի տիր ապէտութեան գէպը ու մ, նոյնպէս և ծասսալի տիրապէտութեան գէպը ու մ։ Իշխանութիւնը պէտք է պատկանի օրէնքին, որի մէջ արագայալաւում է առաջ մատին օրէնքը։ Սստւածալին օրէնքը չէ բացասում միանութիւնը, սակայն միասնութիւնը, զեռ համապատասխան հակագրութիւնների միասնութիւնն է։ Դրա համար էլ Քսենեֆոնի ծրագրների իրագործումը կիսախտէր աստւածալին օրէնքը։ Այնուհետեւ զարդացնելով ու հիմնաւորելով իր այդ միաքը, Տերակիլիսը ստեղծեց իր դիալեկտիկական ուսմունքը իրագարձութեան մասին։

Արդպէս է ասում Ելեֆերոպուլոսը։ Տեղի պակասութիւնը թույլ չէ տալիս մեզ բերել ուրիշ օրինակներ՝ փիլիսոփայութեան զարգացումը պայմանաւորող պատճառների նրա կատարած վերլուծութներից։ Բայց զա հաղիւ թէ այնքան էլ կարեւոր լինի։ Յուս ունինք, որ ընթերցողն ինքն էլ տեսնում է, որ այդ վերլուծութիւնը անլազող է։ Գաղափարների զարգացման պրացէսը ընդհանրապէս անհանեմատ աւե-

1) Նոյն տեղը 1, էջ 99—101.

2) Նոյն տեղը, 1-էջ 103—107.

թ բարդ է, քոն դա թւում է էլեֆերոպուլոսին¹⁾: Կարգալով նրա անսասանելի չտփով պարզեցրած դատողութիւնները գասակարգալին կուի ազդեցութեան մասին փիլիսոփայութեան պատմութեան վրայ, սկսում, ևս ափսոսալ, որ, ինչպէս երեւում է, նրան բոլորովին ծանօթ չէ եղել էսպինասի վերև լիշատակած զիրքը. վերջինիս լատուկ միակողմանիութեանը, կցելով էլեֆերոպուլոսի միակողմանիութեանը, կարելի էր շատ ուղղութեար մացնել նրա վերլուծութեան մէջ:

Բայց ինչպէս էլ որ լինի, յամենայն դէպս էլեֆերոպուլոսի անկաշող փորձը մի նոր փաստ է յօդուտ այն բանի (շատերի համար անսպասելի), որ Մարքսի պատմական մատերիալիզմի աւելի հիմնաւոր իւրացումը օգտակար կլինէր ներկայիս շատ ուսումնասէրների համար՝ պահպանելով նրանց միակողմանիութիւնների մէջ ընկելուց: Էլեֆերոպուլոսը ծանօթ է այդ մատերիալիզմի հետ, բայց լուչդիտէ այն: Դա ապացուցում է այն կարծեցեալ ուղղումը, որը նա անհրաժեշտ է համարում մացնել մատերիալիզմի մէջ:

Նա ասում է, որ տւեալ ժողովաւրդի տնտեսական յարաբերութիւնները պայմանաւորում են միայն «նրա զարգացման անհրաժեշտութիւնը», իսկ ինքը զարգացումը անհատականութեան դործ է. այդիսով այդ ժողովաւրդի «կենսա և աշխարհարմբանոցութեան» բովանդակութիւնը որոշում է, առաջին ժողովաւրդի բնաւորութեամբ ու նրա բնակած երկրի բնոյթով, երկրորդ՝ նրա կարիքներով և երրորդ՝ նրա միշավայրում որպէս բարենորոգիչներ երեւան եկող մարգկանց անհատական առանձնալատկութիւններով: Այդ իմաստով միայն, ինչպէս ասում է էլեֆերոպուլոսը, կարելի է խօսել փիլիսոփայութեան և տնտեսութեան մէջ եղած յարաբերութեան մասին: Փիլիսոփայու-

³⁾ Մենք չենք խօսում գեն այն, մասին, որ խօսելով չին Յունատանի ունտսութեան մասին, էլեֆերոպուլոսը չի տալիս նրա վերաբերեալ ոչ մի կոնկրետ պատկերացում: Նա այդ տնտեսիտիֆ բաւականանում է միայն ընդհանուր տեղերով, որ այստեղ, ինչպէս եւ ամեն տեղ, ոչինչ չի բացադրու:

թիւնն իրագործում է իր ժամանակի պահանջները, նա իրագործում է նրանց՝ համաձայն փիլիսոփալի անհատականութեան¹⁾:

Ինչպէս երեսում է, էլեֆերոպուլոսը ենթադրում է, որ նրա այդ տեսակետը փիլիսոփայութեան և տնտեսութեան փոխարարերութիւն վերաբերեալ ինչ որ մի առանձին բան է Մարքսի և էնդէլսի մատերիալիստական տեսակէտի համեմատութեամբ: Նա անհրաժեշտ է համարում պատմութեան իր բացադրութեանը տալ նոր կոչում, անւանելով այն իրադարձութեան յունական թէորիան», — որը խօսպէս ոչ այլ ինչ է, եթէ ոչ բաւականին վատ մարսուած և բաւականին անհոռնի գրի առնւած պատմական մատերիալիզմ, — յամենայն դէպս խոստանում է խոշոր չտփով աւելի, քան տալիս է էլեֆերոպուլոսը, երբ իր մեթոդի բնոյթագրումից անցնում է նրա օդուագութեանը. այդ ժամանակ նա արդէն բոլորովին հնուանում է Մարքսից:

Ինչ վերաբերում է յատկապէս «փիլիսոփալ անհատին» և ընդհանրապէս ամեն մի գործչի, որը թողնում է իր հետը մարգկութեան պատմութեան մէջ, շատ սխալում են նրանք, ովքեր երեսակայում են, որպէս թէ Մարքս էնդէլսի թէորիան զրա համար աեզ չէ թողել: Դրա համար աեղ թողնուած է, բայց այդ թէորիան կարողացաւ միենոն ժամանակ խօսափել «անհատի»: Գործունեութեամբ ու տնտեսական անհրաժեշտութեան մի գործութիւնը ընթացքը անթուլադրելի հակագրութիւնը, նա զրանով արգէն ցուց է տալիս, որ շատ բիչ է հասկացել պատմութեան մատերիալիզմի արժառական խնդիրը: Պատմական մատերիալիզմի արժառական խնդիրը ասում է,

¹⁾ Սովոր տեղը, 1, էջ 16—17.

²⁾ Սովոր տեղը, 1, էջ 17.

թեզէս կրկեցինք մենք արդէն մի քանի անգամ, որ պատմութիւնն անում են մարդիկ: Եւ եթէ պատմութիւնն արւում է մարդկանցով, կնշանակէ պարզ է, որ առաջում է ի. միշի այլոց նաև «մեծ մարդկանցով»: Մնում է միայն պարզել թէ ինչո՞վ է որոշում այդ մարդկանց գործունէութիւնը: Այդ առթիւ վերեւմ մեր առաջ բերած նամակներից մէկում էնդէլսն ասում է.

«Որ տւեալ երկրում և տւեալ ժամանակում աչքի է ընկնում այս մարդը և յատկապէս այս մարդը և ոչ թէ մի ուրիշը, դա, ի հարկէ, զուտ պատահականութիւն է, եւ եթէ մենք մեկուսացնենք այդ մարդուն, այդ դէպքում նրա փոխանորդի պահանջը կզգացւի. և փոխանորդ կդանւի տան եօն զե mal, բայց և այնպէս վերջ ի վերջոյ կդանւի: Պատահականութիւն էր, որ յատկապէս Կորսիկայի Նապոլէոնը եղաւ այն զինուրական դիկտատորը, որի երեան դալը անխուսափելի դարձաւ պատերազմներից քայլքաւած ֆրանսիական հանրապետութեան մէջ: Բայց եթէ զինէր նապալէոնը, նրա տեղը կրոնէր ծի ուրիշը. դա ապացուցւում է նրանով, որ համապատասխան մարդ գանւել է միշտ, երբ նրա կարիքն զգացւել է—ենար, Օգոստոս, Կրոմվել և ուրիշները: Եթէ Մարքսը գտաւ պատմութեան մատերիալիստական բացադրութիւնը, այդ դէպքում Թիերի, Միննօփի Գիզոի և մինչև 1850 թւի բոլոր անզիւտական պատմաբանների օրինակից երևում է, որ պատմական զարդացումը բերում էր հէնց դրան, իսկ նոյն մատերիալիստական բացադրութեան գիւտը Մորգանի կողմից ցուց է տալիս, որ այդ բացադրութիւնը պէտք է գտնենք: Այդպէս և բոլոր պատմականութիւնների կամ թւացող պատմահականութիւնների վերաբերեալ Ինչքան հեռու է տնտեսութիւնից մեր ուսումնասիրած առարկան և ինչքան աւելի նա ընդունում է վերացական-գաղափարական բնաւորութիւն, այնքան աւելի նրա զարդացման մէջ մենք կհանզիպենք պատմականութիւնների, այնքան աւելի ալիքանման է դառնում նրա զարդացման կոր դիմքը: Բայց գեցէք այդ դիմքի միշին առանց-

քը և դուք կաեսնէք, որ ինչքան աւելի երկար է ձեր ուսումնասիրած դարեշրջանը և ինչքան աւելի ընդարձակ ձեր զննած առարկան, նօյնքան աւելի շօշափելի է դառնում ձեր գծած առանցքի ու անտեսական զարդացումի առանցքի զուղաճեռական կազմելու հնարաւորութիւնը»¹⁾:

Այն մի նշանաւոր գործի «անհատականութիւնը մտաւոր կամ հասարակական զարդացման բնագաւառում պատկանում է այն պատահականութիւնների թւին, որոնց երեան գալը բնաւ չի խանդարում, որ մարդկութեան մասւոր զարդացման «միշին» գիմքը զուգահեռական լինի նրա տնտեսական զարդացմանը²⁾: Ելեֆերովուլոսի համար դա աւելի լաւ կպարզէք, եթէ նա աւելի ուշադիք կերպով մտածէր Մարքսի պատմական թէօրիալի մասին և աւելի քիչ հոդ տանէր իր սեփական այսունական թէօրիաս ուսեղձելու մասին³⁾:

Աւելորդ է նոյնիսկ աւելացնել, որ ներկայումս մենք միշտ էլ չենք կարողանում գտնել տւեալ փիլիսոփայական տեսակէտի երեան գալու ու նրա դարեշրջանի տնտեսական կացութեան միշտ եղած պատճառական կապը: Բայց չէ որ մենք միշտ սկսել ենք աշխատել այդ ուղղութեամբ: Իսկ եթէ մենք կարողանալինք պատասխանել բոլոր լարուցւող հարցերին, այդ դէպքում մեր աշխատանքը վերջացած կլինէր կամ մօտենալիս կլինէր իր վախճանին: Այս դէպքում վեռական նշանակութիւն ունի ոչ թէ այն, որ մենք ատի աւին չենք կարող անում լազմահարել այդ բնագաւառում մեզ հանզիպած բոլոր գժւարութիւններին (չկայ և չի կարող լինել մի այնպիսի մեթոդ, որը կարողանար միանդամեց զննել պէտք անութիւնների վերջացնել զիտութեան մէջ եղած բոլոր գժւարութիւնները), այլ այն, որ պատմութեան մատերիալիստական բա-

¹⁾ Der Sozialistische Akademiker, Berlin 1895, № 20, s. 374.

²⁾ Համամատել մեր «Անհամ պետք պատմութեան մէջ նարգի մասին» յօւածը մարդկան մէջ անհամ անութիւնների մասին:

³⁾ Մարքսի «Թէօրիան անհամ է յունական, որովհանուն նշագետ նարգի, ըստա հրմական լինի բնիքները արտայալուն է յոյն ֆալսիար, իսկ զարգարուն է նոյնական յոյն»... (յրցա. աշխատա. էջ 17) այսինքն էլեֆերապուր.

ցազրութիւնը անհամեմատ աւելի հեշտ կարող է յաղթահարել այդ գժւարութիւնները, քան իդէալիստականը և էլլէկտիկականը: Եւ որ դա այդպէս է, լաւ երաշխիք կարող է ծառայել այն փաստը, որ զիտական միտքը պատմութեան վերաբերեալ իսկապէս ուժեղ կերպով ձգտում է դէպի երեսիմների մատերիալիստական բացազրութիւնը, այսպէս ասած յամառօրէն փնտում է նրան սկսած ըետաւրացիալի դարեցանից¹⁾, և մինչև այժմ էլ չի դադարում դէպի նա ձգտելուց, չի դադարում նրան փնտուելուց, չնայած այն ազնիւ դայրութին, որով համակւում է ամեն մի իրեն յարգող բուրժուական դադափարախօն՝ մատերիալիզմ բառը լսելիս:

Որպէս երրորդ օրինակ այն բանի, թէ որքան անխուսափելի են մարդկային կուլտուրալի բոլոր կողմերը մատերիալիստորէն բացադրելու փորձերը, կարող է ծառայել ֆրանց Ֆեյերհերդի (Feuerherd) հետեւեալ աշխատութիւնը». Die Entstehung der Stil aus der politischen Oekonomie, erster Theil, Braunschweig und Leipzig 1902: Ֆեյերհերդն ասում է. «Պոյութիւն ունեցող արտազրական եղանակի ու վերջինով պայմանաւորած պետական ձերին համապատասխանող մարդկանց բախականութիւնը ուղղում է որոշ կողմեր և մնում է անմերձենալի ուրիշ կողմերի համար: Դրա համար էլ իւրաքանչիւր ոնի գոյութիւնը (գեղարւեստի մէջ Գ. Պ.) ենթադրում է արտիստ մարդկանց գոյութիւնը, որոնք ապրում են կատարելապէս որոշ քաղաքական պայմաններում, աշխատում են արտազրական խիստ որոշ լարաբերութիւնների մէջ և ունեն բոլորովին որոշ իդէալներ²⁾: Երբ արւած են այդ պատճառները, այն ժամանակ մարդիկ ստեղծում են այդ պատճառներին համապատասխանող ոճ, և դա նոյնպիսի բնական անհրաժեշտութեամբ, որպիսի անհրաժեշտութեամբ

¹⁾ Այդ մասին նայիք «Մաներականութիւն» մեր թարգմանութեան երեսորդ հրատակութեան մեր յառաջարանը:

²⁾ Յիշիալ աշխատում. էջ 19.

կատարւում են քիմիական փոփոխութիւնները, երբ գոյաւթիւն ունեն դրա համար խիստ որոշ պայմանները¹⁾: Դա, ինարկէ այդպէս է, և հետաքրքիր է այն հանդամանքը, որ նա ճանաչւած է որպէս գեղարքութեան պատմութեան վերաբերեալ իսկապէս ուժեղ կերպով ձգտում է դէպի երեսիմների մատերիալիստական վիճակով բացարկումը հին Յունաստանի անտեսական վիճակով բացարկելուն, այդ ժամանակ ստացւում մի բան, որ խիստ սխեմատիկ է: Մենք չդիմենք, լուս տեսել է նրա աշխատութեան երկրորդ մասը թէ ոչ մենք գրանով չենք հետաքրքրուել, որովհետեւ մեզ համար պարզ էր, թէ որքան վատեն աիրապետում այդ զիտունները ժամանակակից մատերիալիստական մեթոդին: Նրա դատողութիւնները իրենց ուրագումունքում են մեր անսարութ ֆրիչէների ու Բաժկովների գատաղութիւնները, որոնց ինչպէս և Ֆեյերհերդին, կարելի է ցանկալի, որ ամենից առաջ և ամենից շատ ուսումնակից մատերիալիզմը: Միայն Մարքսիզմը կարող է փրկել այս բանց բարեկանութիւնը և այս բարեկանութիւնը կարող է առաջ գանձնել մի քանի ուրիշ թիւրիմացութիւններ ևս, որոնք խանգարում են պատճական մատերիալիզմը նշգորէն հասկանալուն: Եթէ մենք ուղենանք կարե արտալայտել Մարքսինգելսի հայեցքը ներկայացնեմս հոչակաւոց «հիմքը» և ոչ պակաս հաշակաւոր «վերնաշէնքի» միջն եղած լարաբերութեան վերաբերեալ այն ժամանակ կատարելի ահա ինչ:

XIII.

Մի ժամանակ մեզ հետ ունեցած բանակուի մէջ հանգուցեալ ն. Միխալլովիին պնդում էր, որ Մարքսի պատճական թեորիան զիտական աշխարհում երբէք լայն չափերով չի արածելի: Մենք հենց նոր աեսանք և զեր յետազայում կաենանք, որ դա բոլորովին նիշա չէ: Բայց զեռեօս պէտք է վերացնել մի քանի ուրիշ թիւրիմացութիւններ ևս, որոնք խանգարում են պատճական մատերիալիզմը նշգորէն հասկանալուն: Եթէ մենք ուղենանք կարե արտալայտել Մարքսինգելսի հայեցքը ներկայացնեմս հոչակաւոց «հիմքը» և ոչ պակաս հաշակաւոր «վերնաշէնքի» միջն եղած լարաբերութեան վերաբերեալ այն ժամանակ կատարելի ահա ինչ:

1) Արտագրական ու ժերի կացութիւն.

¹⁾ Յիշիալ աշխատում. էջ 19—20.

2) Նրանցով պայմանաւորւած տն ու ես ու կան յարաբերութիւններ.

3) Սոցիալ-քաղական կազմ, որ հանդչում է տեսական անտեսական «հիմքի» վրայ.

4) Հասարակական մարդու հոգեբանութիւն, որոշւում է մասամբ անմիջականապէս տնտեսականով, և մասամբ էլ նրա վրայ յենւած սողիալ-քաղաքական կադմով.

5) Զանազանակերպ իդէոլոգիաներ, օրոնք արտացոլում
են այդ հոգեբանութեան լատկութիւնները:

Այս Փորմուլան բաւականին բնդարձակ է, որպէսզի
հարկաւոր եղած տեղը տրւի պատմական բոլոր «ձև-
երին». բայց միաժամանակ այդ Փորմուլան բոլորավին օտար
է այն էկլէկտիզմին, որը չի կարողանում զանագան հասա-
րակական ոլժերի մէջ եղած փոխազդեցութեան հասկացողու-
թիւնից դէնն անցնել, չկասկածելով նոյն իսկ, որ այդ որ-
ժերի մէջ եղած փոխազդեցութեան փաստը ատակաւին
չէ փնտում նրանց ծագման խնդիրը: Դա մոնիս-
տական Փորմուլա է: Եւ այդ մոնիստական Փորմուլան
ամրողապէս մատերիալիստական է: Հեղելլ իր «Հոգու-
+ փիլիսոփայութեան» մէջ ասում է. «Պատմութեան միակ
շարժիչ սկզբունքը հոգին է»: Ուրիշ կերպ էլ չի կարելի
մտածել եթէ ընդունենք իդէա լիզմի այն հայեցակէտր,
ըստ որի կացութիւնը պայմանաւորում է մտածողու-
թեամբ: Մարքսի մատերիալիզմը ցուց է տարիս, թէ ինչպէս
մտածողութեան պատմութիւնը պայմանաւորում
է կացութեան պատմութեամբ: Բայց իդէալիզմը
չէր խանգարում հեղելլին ընդունելու տնտեսութեան
ներգործութիւնը որպէս մի պատճառի, որը հետեանք է հո-
գու զարգացման: Նիշգ ալլապէս էլ մատերիալիզմը չխանգա-
րեց Մարքսին ընդունելու պատմութեան մէջ «հոգու» ներ-
ներգործութիւնը որպէս մի ոլժի, որի ուղղութիւնը իւրա-
քանչիւր տւեալ ժամանակում որոշում է տնտեսու-
թեան զարգացման ընթացքով:

Բոլոր իգեսլովիաները ունին մի ընդհանուր արմատ, —
դա աւելալ դարեւ շրջանի հոգեքանութիւնն է:
Այդ բանը դժւար չէ հասկանալ և զրանում կհամոզւի իւրաքանչիւր ոք, ով թէկուզ թռող զիկ կերպավ կժանօթանալ փառաների
հետ: Վիկտոր Հիւգօն, իմեն Դելակրուան և Հեկտոր Բերլիոզը
աշխատուծ էին գեղարեւստի երեք բոլորովին տարբեր ճիւղե-
րում: Եւ բոլոր նրանք բաւական հետու էին իրարից: Յամե-
նան դէպս Հիւգօն չէր սիրում. երաժշտութիւնը, իսկ Դելա-
կրուան անտարբեր էր դէպի բոմանտիկ երաժիշտները: Բայց
